# ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է
1993 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻՑ

16—30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1997 Թ.

№ 18 (104)

ԳԻՆԸ՝ 50 ԴՐԱՄ

## ...Եվ փոխադարձ օգնության

Իսկական բարեկամությունը սահման չի ճանաչում: Ու կարևոր չէ, որ մենք անմիջական սահման չունենք Ռուսաստանի հետ: Մենք միշտ զգացել ենք, ու այդ զգացել են նաև ռուսները, մեր երկու ժողովուրդների միասնությունն ու սկըզբունքային, ջերմ, սրտաբուխ բարեկամությունը: Հայաստանի հակառակորդները միշտ ջանացել են կտրել մեզ Ռուսաստանից ու թողնել մենակ: Եվ լավ է, որ դա չի հաջողվել, լավ է, որ այսօր մեր ռազմավարական շահերը համընկնում են ռուսական շահերին: Եվ այդ փոխշահավետ ու փոխանհրաժեշտ կապերի վավերացում էր հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը Ռուսաստանի Դաշնություն: Թեև հեռուստատեսության մեկնաբանը նկատել էր, որ մեկնելիս հայ պատվիրակները շատ էին ծխել, փոխարենը վերադարձին «Զվարթնոց» օդանավակայանում ոչ ոք չէր ծխում: Ուրեմն, այցը հաջողված էր, այն վավերացրեց ձեռքբերածը, նշեց գալիք 25 տարվա մեր համատեղ անցնելու ճամփան:

Առաջին անգամ ՌԴ այլ պետության հետ կնքում է բարեկամության պայմանագիր, որը նաև փոխադարձ օգնության պարտավորություն է:

Փոխադարձ օգնության: Մենք Ռուսաստանի համար ռազմավարական հենարան ենք Կովկասում ու Մերձավոր Արևելքում, Ռուսաստանը անվտանգության վահան է թշնամիներով շրջապատված Հայաստանի համար:

Հիշենք այդ միշտ: Դա շատ կարևոր է:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

### ՍԵՄԻՆԱՐ-ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Օրերս ՀՀ սահմանադրական դատարանում անցկացված սեմինար-խորհրդակցությունը, որ նվիրված էր մարդու իրավունքների համակարգում ազգային փոքրամասնությունների իրավունքների հարցերին, սկսվեց սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ ստեղծված երկու գրքերի շնորհանդեսով:

Գրքերի վերնագրերը նույնն են՝ «Սահմանադրական վերահսկողություն», բայց տարբեր են բովանդակությունները: Առաջինը համեմատական վերլուծություն է (մենագրություն), հեղինակել է սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, իսկ երկրորդը բուհական օժանդակ ձեռնարկ է, որը հեղինակել են Գագիկ Հարությունյանը և սահմանադրական դատարանի անդամներ Վահե Ստեփանյանն ու Վլադիմիր Հովհաննիսյանը:

Ներկայացնելով մենագրությունը, Գագիկ Հարությունյանը նշեց.

«Մենք առաջնորդվել ենք այն մտահոգությամբ, որ Հայաստանում սահմանադրական վերահսկողության համակարգը պետք է լինի ավելի կատարյալ, գիտականորեն հիմնավորված, գործուն, և այսօր լուծված շատ հարցեր պետք է խմբագրվեն, հակառակ դեպքում կաղ մարդու քայլ է հիշեցնելու մեր առաջընթացը: Այս գրքում փորձ է արվել լուծումներ առաջարկել՝ ելնելով միջազգային փորձից: Այդ նպատակով ուսումնասիրվել է չորս տասնյակ երկրների և հաշվի է առնվել սահմանադրական վերահսկողության համակարգ ունեցող ավելի քան 200 երկրների փորձը»:

Ուսումնաօժանդակ ձեռնարկի մասին խոսելիս պարոն Հարությունյանը կարևորեց իր և գրքի համահեղինակների աշխատանքն այն տեսանկյունից, որ սահմանադրական վերահսկողություն առարկան ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետում ցանկանում են դասավանդել, սակայն չկա համապատասխան գրականություն: Այս ձեռնարկը կարող է դասագրքի դեր կատարել: Կարևորվեց նաև այն հանգամանքը, որ գիրքը նոր ուսումնական տարվա առաջին օրվանից պատրաստ է, և ուսանողներին ու մասնագետներին կտրամադրվի անվճար:

Հանրապետության գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանը մենագրությունը գնահատեց որպես հիմնարար աշխատանք՝ գոհունակությամբ նշելով, որ իրավական նյութը մեր ժողովրդին ներկայացնելու առաջին քայլերն են արվել:

Իրավագիտության դոկտոր Վլադիմիր Նազարյանը կոլեկտիվ աշխատանքի արդյունք համարեց նոր հրատարակությունները և խոստովանեց. «Չէի սպասում, որ ՍԴ-ն կըդառնա իրավաբանական մտքի կենտրոն: Իմ կարծիքով, ՍԴ-ն այժմ այդպիսին է»:

Գերագույն դատարանի նախագահ Տարիել Բարսեղյանի կարծիքով, սրանով դրվում է իրավական նոր մոտեցումների սկիզբը:

Գրքերի շնորհանդեսից հետո ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին զեկուցում կարդաց պատմաբան, արտակարգ և լիազոր դեսպան Ցուրի Մկրտումյանը: Զեկուցողը նախ ներկայացրեց ազգային փոքրամասնությունների իրավունքի միջազգայնորեն ընդունված ըմբռնումը և ապա անդրադարձավ Հայաստանի Հանրապետությունում այդ ուղղությամբ վարվող քաղաքականությանը: Նա նշեց, որ Հայաստանը 1995 թ. վավերացրել է «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» կոնվենցիան և պարտավորված է կատարել դրա պահանջները:

**Լուսինե ՄՈՒՐԱԴՅԱՆ**



## ՏԵՍԱԽՑԻԿԸ՝ ՔՆՆՈՂ

Վիսկոնսինի (ԱՄՆ) համալսարանի ուսանողը արագ և վարժ ընթերցանության քննություն է հանձնում: Իսկ քննող ուսուցիչը՝ տեսախցիկն է: Պատանու աչքերին հագցրած սարքի օգնությամբ տեսախցիկն արձանագրում է նրա աչքերի շարժումը, ճշտում արագությունը: Եվ դրա միջոցով ճշտվում է նաև նրա վարժ կարդալու ունակությունները: Այդպիսի «քննողը» խիստ անկողմնակալ է և անսխալ:

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սեպտեմբերի 1-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցան նախագահական արտահերթ ընտրություններ: Սեպտեմբերի 2-ին՝ ԼՂՀ անկախության օրը, կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակեց ընտրությունների արդյունքները: ԼՂՀ նախագահ է ընտրվել Արկադի Ղուկասյանը, հանրապետության արտգործնախարարի օգտին քվեարկել էր ընտրողների 89,3 տոկոսը:

## Նախագահությունը քննարկեց

Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության հերթական նիստը սկսվեց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի հաղորդումով՝ Չինաստան կատարած այցի արդյունքների մասին:

Հայաստանյան կողմի ներկայացրած մի քանի նմուշներ, որոնց մշակումը իրականացրել են ակադեմիայի համակարգի ինստիտուտները, լըրջորեն հետաքրքրել են չինական կողմին, մասնավորապես ռազմաարդյունաբերական համալիրի բնագավառում:

Պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը անչափ կարևորեց Հայաստան-Չինաստան գիտական համագործակցությունը: Երկուստեք պայմանավորվածությամբ այժմ պատրաստվում է համաձայնագրերի և պայմանագրի խոշոր փաթեթ, որը կստորագրըվի չինական պատվիրակության փոխադարձ այցից հետո:

— Չինաստան-Հայաստան գիտական համագործակցությունը, որը մոտ ապագայում կվավերացվի մեծ պայմանագրով, ունի մեծ հեռանկարներ, փոխշահավետ է և մենք մեծ սպասելիքներ ու ակնկալիքներ ունենք այդ համագործակցությունից,— այսպիսի լավատեսական շեշտով ամփոփեց իր հաղորդումը ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը:

Այնուհետև նախագահությունը լսեց և հաստատեց ակադեմիայի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Սուսաննա Լաչինյանի «ՀՀ ԳԱԱ տնտհաշվարկային կազմակերպությունների 1995—96 թթ. ֆինանսա-տնտեսական գործունեության մասին» հաշվետվությունը:

ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի առաջարկությամբ նախագահությունը հաստատեց «Դիագնոստիկա» բժշկական միավորման կողմից հայտարարված բժշկական ախտորոշման գծով 1998 թվականի գիտական գրանտների բաշխման մրցութային համատեղ հանձնաժողովի կազմը և մրցութային հայտարարությունը (կարդացե՛ք 4-րդ էջում):

Նախագահության օրակարգի վերջին հարցը հոբելյանական էր:

— Սիրելի բարեկամներ, այսօր մեր ակադեմիայի նախագահությունը հավաքվել է նշելու մեր գործընկերոջ, հրաշալի մարդու, գիտության հիանալի կազմակերպչի, մանկավարժի, տաղանդավոր, սկըզբունքային և խիզախ գիտնականի՝ Միքայել Խաչիկի Քոթանյանի ծննդյան յոթանասուն և գիտամանկավարժական, հասարակական-քաղաքական գործունեության հիսուն տարին: Եկեք սրտանց շնորհավորենք մեր սիրելի ընկերոջը, քաջառողջություն ու արևշատություն մաղթենք նրան և ցանկանանք, որ ինքն ու նրա ղեկավարած տնտեսագիտության ինստիտուտի կոլեկտիվը շարունակեն իրենց օգտակար գործունեությունը՝ ի նըպաստ Հայաստանի Հանրապետության տնտեսության կայացման,— ասաց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը:

Հոբելյարին ողջունեցին, մեծարանքի ու բարի ցանկությունների, գնահատանքի, Հայաստանի տնտեսագիտական մտքին նրա բերած նշանակալի վաստակի մասին անկեղծ ու ջերմ խոսքեր ասացին ակադեմիկոսներ Վլադիմիր Խոջաբեկյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Հրանտ Ավետիսյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Գրիշա Ղարիբյանը:

Շնորհակալության խոսք ասաց ակադեմիկոս Միքայել Քոթանյանը:

Այնուհետև ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը հոբելյարին հանձնեց ակադեմիայի նախագահության ողջույնի ուղերձը և ընթերցեց Տնտեսագետների միջազգային միության պրեզիդենտ Գ. Պոպովի և փոխպրեզիդենտ, գլխավոր տնօրեն Վ. Կրասիլնիկովի շնորհավորական հեռագիրը, ուր մասնավորապես ասված է.

«...Ձեր աշխատանքը միութենական տնտեսագիտական ընկերությունում, Հայաստանի տնտեսագետների միությունում և Տնտեսագետների միջազգային միությունում, Ձեր բարձր պրոֆեսիոնալիզմը մեծ հեղինակություն են բերել Ձեզ և արժանի հարգանք ոչ միայն Հայաստանի, այլև ԱՊՀ երկրների ու հեռավոր արտասահմանի տնտեսագիտական հասարակայնության շրջանակներում:

...Ամբողջ հոգով շնորհավորում ենք Ձեր 70-ամյակը, մաղթում քաջառողջություն, լավատեսություն, ստեղծագործական նոր հաջողություններ»:

«Գիտության» խմբագրությունը սրտանց միանում է այդ շնորհավորանքներին:

### ՄԵԾԱՐԳՈ ՄԻՔԱՅԵԼ ՔՈԹԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ նախագահությունը և հումանիտար գիտությունների բաժանմունքը ջերմորեն ողջունում են Ձեզ՝ ականավոր տնտեսագետին, ծննդյան 70 և գիտակազմակերպական, հասարակական-քաղաքական գործունեության 50-ամյա հոբելյանի առթիվ:

Հսկայական է Ձեր ավանդը հայ տնտեսագիտական մտքի զարգացման գործում: Տասնամյակներ շարունակ և այսօր էլ մեծ ավյունով Դուք զբաղվում եք տնտեսագիտության տեսության մի շարք խնդիրների՝ նյութական շահերի և նյութական շահագրգռվածության, տնտեսագիտական օրենքների, հասկացությունների ու կատեգորիաների և տնտեսագիտության բազմաթիվ այլ հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

Ձեր հետազոտություններով Դուք մշակել եք մի շարք ելակետային տեսական դրույթներ, որոնք էականորեն փոխել են տնտեսագիտության տեսության հիմնահարցերի ըմբռնումը: Մեծ են Ձեր ծառայությունները հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի, նպատակային համալիր ծրագրերի, շուկայական հարաբերությունների պայմաններում մտավոր գործունեության և այլ հիմնախնդիրների մշակման բնագավառներում:

Առավել կարևորվում է այն, որ այսօրվա Ձեր ուսումնասիրությունները համահունչ են ժամանակի ոգուն:

Զգալի է նաև Ձեր ավանդը տնտեսագետների հերթափոխի պատրաստման գործում: Դուք կըրթել և դաստիարակել եք մի քանի տասնյակից ավելի բարձրորակ մասնագետներ, որոնք աշխատում են հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում:

Հարգարժան Միքայել Խաչիկի, այսօր Ձեզ հատուկ երիտասարդական եռանդով Դուք շարունակում եք գիտակազմակերպական հմտությամբ ղեկավարել ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը, որը հանրապետության տնտեսագիտական կադրերի պատրաստման լավագույն դարբնոցն է:

Մեկ անգամ ևս շնորհավորելով Ձեր հոբելյանի կապակցությամբ, մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, արևշատություն և գիտամանկավարժական բեղմնավոր գործունեություն:

**Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆ**
ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս
**Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ**
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս

## ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ. 1700

## Եղիշե առաքյալ

**Զորայր ԽԱԼԱՓՅԱՆ**

Հայոց եկեղեցու պատմությունը սկսվում է Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների մուտքով Հայաստան: Թովմաս առաքյալի աշակերտներից ս. Թադեոսը, ըստ Աբգար թագավորի խնդրագրի առ Քրիստոս, գալիս է Եդեսիա՝ թագավորին բուժելու: Աբգարն ապաքինվեց, ընդունեց քրիստոնեությունը, դարձավ առաջին հայ մկրտյալ թագավորը. այս պատմությունը հայոց հողի վրա պիտի կրկնվի, սա նախադեպ էր: Ապա շարունակելով լուսավորչական քարոզչությունը Հայաստանում, Թադեոսը նահատակվեց Աբգարի զարմիկի՝ Սանատրուկի ձեռքով Արտազում, որն Ավարայրի դաշտին հարակից մի վայր է և ուր այժմ կանգուն է նրա անվան եկեղեցին:

Այսինքն թե՝ քրիստոնեությունը մուտք է գործել Հայաստան դեռևս առաքելական ժամանակներում, Տիրոջ նահատակությունից ոչ շատ ժամանակ անց: Ըստ այսմ էլ հայոց եկեղեցին կոչվել է առաքելական, առաջին եկեղեցին Երուսաղեմի եկեղեցուց հետո, ուր հայրապետ էր Տիրոջ եղբայր մեծն Հակոբոսը: Վերջինիս դերը, հայոց եկեղեցու հիմնադրման գործում առաջնային է, քանզի հայ լուսավորիչներից Եղիշան կամ Եղիշեն բախտ է ունեցել նրա ձեռքով օծվելու բուն Երուսաղեմում, և սրա մասին էլ կլինի մեր պատմությունը: Սակայն դառնանք լուսավորության արշալույսին:

Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» ոգեշունչ մի ասք է հայ ժողովրդի դարձի ու պետության կողմից պաշտոնական կրոն ճանաչվելու մասին:

Հայոց շատ պատմություններ են ստեղծվել ու գրվել ըստ պատվիրատուի, որոնց անունները մնացել են գրավոր, բայց նրանց ո՛վ և ի՛նչ լինելը թաղված է մթության մեջ: Այս մեկի պատվիրատուն նախ իր սեփական հավատն էր, ապա դարձի եկած ժողովուրդն ու պետական դարձած հայոց եկեղեցին: Գրվեց, հրատարակվեց, այսինքն գրիչների ձեռքով բազմացվեց, դարձավ օրինակելի, թարգմանվեց օտար լեզուներով այլ ժողովուրդների համար՝ որպես ձեռնարկ, թե ինչպես քրիստոնեության լույսը պետք է ի պաշտոնե ամրապնդել այլ երկրներում նույնպես:

Քրիստոնեության մուտքից հետո և դրա իսկ շնորհիվ ծընունդ առած հայոց առաջին գրավոր պատմությունը կրոնի ու եկեղեցու պատմություն էր նախ և առաջ: Պատահական չէ, որ առաջին մատենագրության որոշ հեղինակներ իրենց գիրքը հայոց պատմություն չեն կոչել, այլ միայն հետագա դարերում կոչվեցին այդպես: Եվ հենց այդպես էլ խնդրո առարկա Մովսես Կաղանկատվացու եզակի պատմությունը Աղվանքի եկեղեցու պատմությունն է: Ագաթանգեղոսի գիրքը «Հայոց պատմություն» վերանվանվեց հետագայում, մինչև այդ ուներ մեկ այլ վերտառություն՝ «Գրիգորի գիրք», ինչպես Ավետարանն է «Քրիստոսի գիրք», դրանով իսկ ճշտորեն նշելով գրվելու նպատակը: Այդքան վաղ դարերում թարգմանվելու իմաստն էլ կրոնական բովանդակությունն էր, անշուշտ օտարներին հետաքրքրում էր ոչ հայոց աշխարհիկ պատմությունը:

Ինչի՞ մասին է վկայում հայ պատմագրության նախակարապետը: Ս. Թադեոսի ու Բարդուղիմեոսի նահատակությունից ավելի քան երկու դար շարունակվող լռությունից հետո, պատմում է, որ հայոց Տրդատ հեթանոս թագավորը՝ Գայանե ու Հռիփսիմե քրիստոնյա կույսերին նահատակելով՝ պատուհասվեց ծանր մի հիվանդությամբ: Այսինքն, Հայաստանում կրկնվեց նույն պատմությունը, կամ եղածի երկրորդ տարբերակը. հիվանդ Աբգար թագավորի դերում հիվանդ Տրդատն էր, ս. Թադեոսի դերում՝ Գրիգոր Լուսավորիչը: Հետագա դեպքերը նա կրկնվեցին նույնությամբ, Տըրդատն ապաքինելով դարձավ երկրորդ մկրտյալ հայ թագավորը, նրա օրոք ժողովուրդը դարձի եկավ, և դա 1700 տարի առաջ էր: Մնացածը հայտնի է:

Այս պատմությունն այլևայլ ձևերով վերապատմել են հետագա հեղինակները, մշտապես ելնելով Ագաթանգեղոսի գրքից, մինչև յոթերորդ դար, և այս դարում մեկ ուրիշ հայ հեղինակ՝ Մովսես Կաղանկատվացին հայոց դարձի պատմության մեջ առաջին անգամ հիշատակում է մեկ այլ առաքյալի անուն ևս, Թադեոսի աշակերտ Եղիշա կամ Եղիշե առաքյալի անունը, որը գործել ու նահատակվել է Հայոց արևելյան կողմանց, այն է՝ Աղվանք աշխարհում: Հետագա դարերի պատմիչներից կարծեմ միայն Կիրակոս Գանձակեցին է, որ մեկ անգամ հիշատակում է սրբի անունը ելնելով Կաղանկատվացուց, մեջբերելով Աղվանքի եկեղեցու առաջին հայրապետների անունները, որը գլխավորում էր Եղիշե առաքյալը:

Կաղանկատվացու «Աղվանքի պատմությունը» ևս նախապես պատմություն չի կոչվել և հեղինակի նպատակը երկրի աշխարհաքաղաքական իրադարձությունների շարադրանքը չի եղել, ինչպես ընկալվում է այժմ, այլ Աղվանքի եկեղեցու պատմությունն անելը: Պատահական չէ, որ գիրքը Աստվածաշնչի նմանությամբ սկսվում է ծննդաբանության ու վերջանում վերոհիշյալ ցուցակով, սրանով իսկ շեշտելով գրքի նպատակը:

Գիրքը, որպես աշխարհիկ պատմություն ընկալելու մոլորությունն այնքան հիմնավոր է եղել, որ ժամանակակից պատմաբանը գրքի առաջաբանում գրում է. «Սրբերի նըշխարների գյուտագրությունը, դավանաբանական վեճերը, հըրաշագործությունների պատմությունը և պատմության հետ կապ չունեցող այլ նյութեր խաթարել են Կաղանկատվացու պատմական աշխատության բնույթը», և պատմության հետ կապ չունեցող սույն նյութերը բացասական հետևանք են ունեցել պատմական անցքերը հետևողական ընկալելու համար այն աստիճան, որ «մեր բանասիրության մեջ առաջարկվել է գիրքը քանդել ու վերաշարադրել ըստ պատմական անցուդարձի ժամանակագրության»: Գիրքը բարեբախտաբար չի մկրատվել, չնայած գիտնականն ափսոսանք է հայտնում, որ «պատմություն գրողը մի՞թե չի նկատել, որ այսպիսի նյութերը խճողում և վնասում են գրքի ընթացքին»:

Հեղինակի բուն նպատակը՝ Աղվանքի առաքելական եկեղեցու ծագման պատմությունը սկզբնավորումից մինչև իր օրերը, համարվել է ավելորդ ու երկրորդական, արժեքավոր է ճանաչվել միայն գրքում տեղ գտած ժամանակագրությունը: Չնայած, հիրավի, արդի պատմաբանի համար ժամանակագրությունը գերակա է և խոսքի հեղինակը յուրովի իրավացի է:

Օգտվելով Ագաթանգեղոսից, Կաղանկատվացին նույնպես լուսավորչության դարաշրջանը սկսում է Թադեոս առաքյալից, որը նահատակվեց հայերի կողմից Արտազում, ապա տալիս է մեր նախնին մատենագրությանն անհայտ սույն պատմության շարունակությունը. «Նրա աշակերտ սուրբ Եղիշան վերադառնում է Երուսաղեմ և պատմում է իր առաքելակիցների սքանչելի պատմությունը: Այստեղ Սուրբ Հոգու ներշնչանքով Եղիշան ձեռնադրվում է սուրբ Հակոբոսի՝ մեր Տիրոջ եղբոր կողմից, որը Երուսաղեմի առաջին հայրապետն էր: Իր համար վիճակ ընտրելով արևելքը՝ Երուսաղեմից ճանապարհվում է Պարսկաստանի միջով, մըտնում մազքութների մեջ՝ խուսափելով հայերից»: Խոսքն Աղվանքի բնակիչների մասին է և սա և՛ս մի փաստ է Արցախի պատմությունն աղավաղողների դեմ, իբր հայերն այստեղ եկվորներ էին: Միաժամանակ հայերից խուսափելու միտումով առաքյալի սույն ճանապարհորդությունը կարծես գծում է դարաշրջանի քաղաքական քարտեզը, թե մինչև ուր էին տարածված հայերը 2000 տարի առաջ:

Մազքութների աշխարհից նա այնուամենայնիվ մտնում է հայերով բնակեցված Աղվանքի Ուտի գավառը, ապա հիմնավորվելով Գիսում, այն Գիսը, որտեղ հետագայում հայերին ուսուցանում էր Մեսրոպ Մաշտոցը, Աղվանքի մայրաքաղաքից արևմուտք ընկած այս բընակավայրում հիմնում է եկեղեցի: «Արևելցիների եկեղեցիների սկիզբն այս տեղում եղավ, որ դարձավ կենտրոն և լուսավորության վայր: Այստեղից անցավ Զերգունի դաշտակը... և այստեղ նահատակվեց ու նետվեց մի փոսի մեջ, որ կոչվում էր Հոմենք»: Զերգունին ու Հոմենքը տեղադրվում են Արցախում: Այլ կերպ, Եղիշեին վիճակվեց նույն ճակատագիրը, Թադեոս առաքյալի նման նա ևս նահատակվեց հեթանոս հայերի կողմից:

Անժամանակ անց սրբի գըլուխը տեղափոխում են Հոռեկա կամ Ուռեկան վանք, որն այնուհետև կոչվեց Գլխու: «Ապա այստեղից տեղափոխեցին Ներս-Միհրի սուրբ միաբանություն, որն այժմ կոչվում է Ջրվշտիկ»: Ջրվշտիկը նույն անունով այժմ իսկ կա Թարթառի հովտում, Մատաղիս ավանից արևմուտք, ուր էլ հետագայում կառուցվեց սրբի անունը կրող Եղիշե առաքյալ եկեղեցին, 12-րդ դարում:

Պատմիչը մի կարևոր հանգամանք ևս նշում է: Եթե Թադեոսն ու Բարդուղիմեոսը անշուշտ հրեաներ էին, ապա Եղիշեն հայ էր, քարոզել ու նահատակվել է իր ժողովրդի համար. «Երանելի Եղիշան քրիստոնեության տարածումը սկըսեց երկրի (այսինքն Հայաստանի) ծայրամասերից, ուստի լուսավորեց հյուսիս-արևելյան որոշ մասեր միայն և ոչ ամբողջը, ինքն էլ հոգեշահ պայքար մղելով իր ժողովրդի համար, չարչարվեց տանջահար մահով»:

Այնուհետև, ինչպես ասվեց, լուսավորչության գործը Հայաստանում ավելի քան երկու դար թափուր մնաց, մինչև «Տրդատի ձեռքով լուսավորվեց Մեծ Հայքը», այսինքն բուն Հայաստանը, և Աղվանքի Ուռ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

# Խազերը կբացե՞ն գաղտնիքը

Օ Սուղ, ՚ Շեշտ, ՝ Բութ, V Փուշ, ɔ Ծունկ, ~ Թունծ, ‿ Տաշտ, ⌐ Երկար, ℮ Պարույկ կամ Ոլորակ, ⅴ Զարկ, / Սուր, ) Խուր, ⟨⟨ Խոսրովային, ∀ Հուհաւ, ȝ Փաթութ, ʍ Խաղ, ʍ Վերնախաղ, ʍ Ներքնախաղ, ^ Բեկոր, ~ Էկոր, ⁄ Ձգակոր, ⩗ Մենկոր։

*(Սկիզբը՝ № 17-ում)*

1914 թ. Փարիզում Կոմիտասը երաժշտագետների միջազգային կոնգրեսում դասախոսություն է կարդում ֆրանսերեն «Հայ եկեղեցու առոգանության համակարգի տեսության վերաբերյալ հայ հին մեկնողական քերականական աշխատություններում առկա հիմնական տվյալները»։ Այդ աշխատությունը 1938 թ. հայերեն թարգմանությամբ հրապարակվել է Փարիզում «Հայ գեղջկական երաժշտություն, հայ եկեղեցվո առոգանության նշանները» վերնագրով։ Այդ առթիվ Մարգարիտ Բաբայանը Ռոմանոս Մելիքյանին հասցեագրված մի նամակում գրում է, որ 1914 թ. հունիսին, Փարիզում կայացած միջազգային երաժշտական ընկերության համագումարում Կոմիտասը երկու դասախոսություն է կարդացել։ Դրանցից մեկը նվիրված էր հին հայկական խազերին։ Դասախոսությունը այնքան մեծ հետաքրքրություն է առաջացրել, որ գերմանացի գիտնականները զեկուցման նյութերն իրենց հետ տարել են՝ հանգամանորեն ուսումնասիրելու։

Նույն նամակում Մ. Բաբայանը ցավով տեղեկացնում է, որ մեկ ամսից պատերազմ ծագեց և այլևս անհնար եղավ գտնել Կոմիտասի աշխատությունները, ոչ բնագրերը և ոչ էլ թարգմանությունները։ Բարեբախտաբար Կոմիտասի հիշյալ աշխատությունները փրկվել են կորստից և պահվում են Երևանի Արվեստի թանգարանում։

Ամփոփելով իր խազաբանական հետազոտությունների արդյունքները, հրապարակված հոդվածներում, Կոմիտասը ներկայացնում է խազերի համակարգման իր սխեման։

Երաժշտագետ Ն. Թահմիզյանը գտնում է, որ Կոմիտասի խազաբանական դրույթները հիմք ընդունելով, չի կարելի համաձայնել Ռ. Աթայանի այն կարծիքին, որ մանրամասն (խազանշանների վերաբերյալ հին մեկնաբանություններում) կիրառված համակարգը լիակատար կերպով հնարավորություն է տալիս գրի առնելու երաժշտական ստեղծագործության բոլոր տեսակները, դեռ ավելին՝ երաժշտական ստեղծագործություն գրի առնելու համար Ռ. Աթայանի կարծիքով, հայկական միջնադարյան խազագրությունը ուներ բոլոր անհրաժեշտ միջոցները։ Եթե «մանրուսման» գրքերում ամեն ինչ այնքան պարզ լիներ, ապա խազագիտությունը այսօր նման խնդիրների առջև կանգնած չէր լինի։

«Կոմիտասի ձեռագրերի ուսումնասիրությունը, — գրում է Ռ. Աթայանը,— մեզ բերում են այն համոզման, որ նրա գրություններում շոշափված հարցերը մեծ մասամբ նշանակալից և կարևոր են։ Նրա կապիտալ աշխատության հիմքում մեծ հավանականությամբ, հենց այդ հարցերն են դրված եղել և դրանց ուսումնասիրությամբ է, որ Կոմիտասը ժամանակին հասել է խազային նոտագրության պարզաբանմանը»։

Այնուամենայնիվ, ինչո՞ւ հայ հասարակությանը չհասան Կոմիտասի խոստացած հատորները։ Վերին աստիճանի խստապահանջ, բծախնդիր, հույժ համեստ մի գիտնական, ինչպիսին Կոմիտասն էր, չէր կարող հրապարակավ, անհիմն կերպով հասարակությանը խոստանալ «մոտիկ ապագայում», «առանձին հատորներով», ոչ թե հոդվածներով, լույս աշխարհ հանել բազմաթիվ տարիների իր խազագիտական աշխատանքների արդյունքները և երդմնազանց լինել։ Եթե մինչև 1915 սև թվականը Կոմիտասը իր խազաբանական հետազոտություններում դեռևս չէր հասել «վերջակետին», ապա գոնե թողած կլիներ հիշված հատորների սևագրերը, որոնք, դժբախտաբար, ցարդ չեն հայտնաբերված։

Մեր կարծիքով, պատերազմի թոհ ու բոհի մեջ շատ բանի հետ կորել են նաև Կոմիտասի շատ արժեքավոր ձեռագրերը և տպագրության համար պատրաստ խազաբանության հատորները։ Նման կորուստները, ցավոք, եզակի չեն մեր մշակույթի համար։

Կոմիտասի ընկեր և բարեկամ, մեծ նկարիչ Փանոս Թերլեմեզյանը գրում է. «Կոմիտասի արխիվեն շատ աննշան բան էր դուրս եկած, նրա գործերու մեծամասնությունը կորսվեր էր անհոգության պատճառով։ Դրանցից էր խազերությանը նվիրված ծավալուն աշխատություն մը, հարյուրավոր մշակված ու բազմաձայնված երգեր, պարերգեր, «Անուշ» օպերան և պատարագը՝ համարյա լրիվ վիճակում, զորս ես իմ սեփական աչքերով 1911—1915 թվերին դրված տեսեր եմ Կոմիտասի դարակներուն մեջ»։

1914 թ. ռուս հայտնի արվեստաբան Միխայիլ Գնեսինը Կոնստանդինոպոլսում այցելում է Կոմիտասին և երաժշտության մասին երկար զրույց ունենում նրա հետ։ Շատ արժեքավոր է այն, ինչ Կոմիտասը ասել է խազերի վերծանության վերաբերյալ իր ուսումնասիրությունների մասին։ «Այնուհետև Կոմիտասը,— գրում է Մ. Գնեսինը,— ինձ պատմեց շատ հետաքրքիր բաներ «խազերի» վերաբերյալ իր կատարած հետազոտությունների մասին, պարզորոշ ինձ հասկացնելով, թե ինչքան դժվար է հետազոտական աշխատանքը այդ բնագավառում և ինչքան ըզգույշ պետք է լինել վերջնական եզրակացություններ անելու համար։ Երիտասարդ հասակից,— ասաց նա,— ես ջանասիրաբար աշխատել եմ ուսումնասիրել մեր երաժշտանշանները։ Այս գիրքը այդ աշխատանքի արդյունքն է (Կոմիտասը ցույց տվեց այդ գիրքը), որի վերաբերյալ ես զեկուցումով հանդես եկա Փարիզում։ Իմ աշխատությունը ունեցավ մեծ հաջողություն և արժանացավ մրցանակի։ Բայց ես աշխատանքները չդադարեցրի։ Անցել է արդեն շուրջ 20 տարի և ես հանգեցի միանգամայն այլ եզրակացությունների։ Սկզբում իմ եզրակացությունները հիմնված էին մեր երաժշտական նշաններում գծիկների ուղղության ուսումնասիրության արդյունքների վրա, իսկ հետագայում պարզվեց, որ գծիկի աննշան հաստացումը արդեն կարևոր նշանակություն ունի մեղեդու վերծանման համար։ Պարզվեց, որ այդ բոլորը անհամեմատ բարդ է և հարուստ, քան ես մտածում էի սկզբում։ Ես համոզված չեմ, որ այստեղ ամեն ինչ բացահայտված է և շարունակում եմ աշխատել»։

Մ. Գնեսինի վկայությունը մեկ անգամ ևս փաստում է, որ Կոմիտասը իր խազաբանական ուսումնասիրություններն առանձին գրքով ունեցել է, թեև այդ ուղղությամբ աշխատանքները ամենևին էլ ավարտված չի համարել։

Կոմիտասից հետո առաջինը խազերի մեկնությամբ զբաղվել է նրա աշակերտ կոմպոզիտոր Սպիրիդոն Մելիքյանը։ Նա հայոց հին խազերի ծագումը դնում է 12-րդ դարի վերջից և գտնում է, որ դրանք զուտ բյուզանդական փոխառություններ են։ Այս սխալ ըմբռնումը հանգամանորեն մերժվել է կոմիտասագետ Ռ. Աթայանի կողմից։ Այս թյուր տեսակետը ժամանակին օգտագործվել է հայոց ինքնուրույն երաժշտության գոյությունը ժխտողների կողմից։

Հաջորդ հետազոտողը Ռ. Աթայանն է, որն իր 1959 թվականին լույս տեսած «Հայկական խազային նոտագրություն» աշխատության մեջ «Գրիգոր Գապասաքալյանի խազաբանությունը» և «Խազերի սիստեմի ծագման և զարգացման հարցի մասին» հոդվածներում ճշտել է հայկական խազերի ինքնուրույն լինելու պարագան, տվել խազագիտության զարգացման ընթացքը մինչև մեր օրերը, իր և նախորդների (հատկապես Կոմիտասի) խազաբանական մեկնաբանական դրույթների կիրառմամբ վերծանել է որոշ խազային նշանների նշանակությունը և ընդհանրապես «փորձ է» արել բանալ խազերի գաղտնիքները, որոնց հիման վրա վերականգնել է միջնադարյան երաժշտության մի շարք նմուշներ։ Թեև շատ զգուշավոր, արել է մի քանի կարևոր եզրակացություններ, որոնք խազերի վերծանության ճանապարհին օգտակար քայլեր են։

Այս կամ այն չափով խազագիտությանը անդրադարձել են երաժշտագետներ Հակոբ Հովհաննիսյանը՝ իր 1914 թվականին տպագրած «Հայ երաժշտության պատմությունը» գրքում և Վ. Սամվելյանը՝ 1948 թվին հրապարակած հոդվածում։ Երկուսն էլ խազաբանության խնդրին մոտեցել են մակերեսորեն և նրանց արածը խազագիտության համար արժեք չի ներկայացնում։

Մյուս լուրջ հետազոտողը երաժշտագետ Նիկ. Թահմիզյանն է, որն իր բազմաթիվ աշխատանքներում քննության է ենթարկել հայ միջնադարյան երաժշտության մի շարք տեսական խնդիրները, որոնց վերլուծության հիման վրա՝ նկատի ունենալով նաև նախորդների փորձը, աշխատել է վերծանել նախ՝ պարզագույն խազերը և ապա «միջին բարդության» խազերի վերծանության փորձ է կատարել։ Այն, որ իր արածը նա որակել է որպես փորձ, արդեն խոսում է հեղինակի գիտական բարեխղճության մասին։ Թեև Նիկ. Թահմիզյանը իր գիտական որոնումներում մի քայլ առաջ է անցել Ռ. Աթայանից։

Խազերի վերծանության խնդրով մեր օրերում զբաղվել են երաժշտագետ Կարո Չալիկյանը, որն իր ուսումնասիրություններն ամփոփել է «Առաջին և առաջին կողմ ձայնեղանակների կառուցվածքն ու խազային համակարգի հարցերը» հետաքրքիր աշխատությունում, երիտասարդ երաժշտագետ Արթուր Շահնազարյանը, որի (մասնագետների գնահատմամբ) պրպտումները նույնպես մնում են փորձի շրջանակներում և երբեմն էլ մտավարժանքի տպավորություն են թողնում։

Այսօր թե մեծավաստակ Նիկ. Թահմիզյանը և թե սկսնակ Ա. Շահնազարյանը հայրենիքում չեն, և մեզ հայտնի չէ, թե նրանք ինչ նոր բացահայտումներ են արել խազագիտության բնագավառում։

Բայց մի բան անվիճելի է, որ խազերի բոլոր գաղտնիքները բացող բանալին ցարդ գտնված չէ։

Մեր կարծիքով պատմականորեն այդ դժվարությունը ծագել է այն պարզ պատճառով, որ հայ միջնադարյան երաժիշտների միայն մի փոքր մասն է հասու եղել խազերի գաղտնիքին, իսկ մյուսները հորինել կամ կատարել են առաջինների նմանակմամբ։ Շարականների, գանձերի, տաղերի և ժողովրդական երգերի եղանակները հաճախ փոխանցվել են սերնդե-սերունդ հիշողությամբ, հիմնականում, ինչպես ժողովուրդն է ասում, «բերնե-բերան»։

Հին աշխարհի շատ գիտություններ և արհեստներ հիմնականում գաղտնի են պահվել։ Եվ հայ հին խազերն էլ երաժշտական նշանների (նոտաների) գաղտնագրերն են։ Եթե խազերի զարգացման նախասկզբնական փուլում, համեմատաբար շատ պարզ գրանցումները մատչելի են եղել գրեթե բոլոր երաժիշտներին, ապա զարգացման երկրորդ փուլում, երբ խազային արվեստը հասել է իր զարգացման գագաթնակետին, բարդից բարդ է դարձել, արդեն խազերի իմացությանը տիրապետել են միայն մի քանի անհատներ։ Գուցե՞ սա եղել է պատճառներից հիմնականը, որ հաջորդ փուլում խազային գրառման արվեստը անկում է ապրել և մոռացության մատնվել։

Մի հանգամանք էլ իր դերն ունեցել է խազերի բացահայտմանը դժվարություններ հարուցելով։ Դա այն է հավանաբար, որ նույն խազանշանը տարբեր երաժիշտների մոտ և տարբեր ժամանակներում միանգամայն տարբեր նշանակություն է ունեցել։ Հնարավոր է անգամ այն, որ նույն երաժիշտը իր իսկ ստեղծած տարբեր երաժշտական ստեղծագործություններում նույն խազանշանին տվել է այլ իմաստավորում։ Եթե դա այդպես չլիներ, նույն խազանշանը բոլոր ժամանակներում և բոլորի կողմից նույնական ընկալվեր, ապա խազերի վերծանության գործը մեր կարծիքով չափազանց դյուրին կլիներ։ Դրա ապացույցն այն է, որ բոլոր վերծանողներն էլ նույն երաժշտական ստեղծագործությունը վերականգնում են միմյանցից բավականին տարբեր ընկալումներով։

Սակայն ամենևին բացառված չէ, որ 21-րդ դարը կծնի իր Կոմիտասին, որը անվերապահորեն կլուծի խազերի վերծանության կնճռոտ խնդիրը, և միջնադարյան հայ երաժշտության բազմաթիվ ստեղծագործություններ կհնչեն այնպես, ինչպես իրենց ստեղծման օրերին՝ անաղարտ և հարազատ։

Հուսանք և սպասենք, 21-րդը հեռու չէ...

**Խաչիկ ՍԱՖԱՐՅԱՆ**

---

## Նոր հանդեսի ծնունդը

Ընթերցողի սեղանին դրվեց «Հայ-քրդական բարեկամության ընկերության» «Բարեկամություն» հանդեսը։ Փաստա-վավերագրական նյութերով հարուստ է հանդեսի առաջին համարը։ Նորածնին ողջունել են՝ Քուրդիստանի աշխատավորական կուսակցության նախագահ Աբդուլլահ Օջալան, Քուրդիստանի ազգային ազատագրական ճակատի ներկայացուցիչ ԱԳՀ-ում Խանա Ալքան, ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը, «Ռյա Թազա» թերթի խմբագիր, ՀՀ քուրդ մտավորականության խորհրդի վարչության նախագահ Ամարիկե Սարդարը և ուրիշներ։

Հանդեսում «Եղիշե Չարենցը և քրդական գրականությունը» հոդվածով հանդես է եկել ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանը։

Պատմական արժեք ներկայացնող մի լուսանկարում պատկերված է մեծատաղանդ Հովսեփ Օրբելին՝ շրջապատված քուրդ և ռուս քրդագետներով։ Հենց Հ. Օրբելուն էլ նվիրված է «Անմոռաց մեծություններ» հոդվածը։

«Աստծո կամքով մենք հազարամյակներ իրար կողքի, հարևանությամբ ենք ապրում, միասին կիսում պատմության արհավիրքները, միասին գոյատևում։ Վստահորեն կարող ենք ասել, որ այսօր էլ մեր երկու ժողովուրդները ազգային-ազատագրական պայքարի առաջագծում են ու թեև տարբեր են մեր իրավիճակներն ու պայքարի ձևերը, նույնն է հակառակորդը. դա բիրտ, մարդատյաց ազգայնամոլությունն է, դա թուրքական բռնապետությունն է, որը յուրացնելով մեր պատմական հողերը, տիրանալով բազմաթիվ ժողովուրդների ունեցվածքին, հողին, մշակույթին ու այսօր էլ շարունակելով իր նախնիների անսքող բռնակալությունը՝ «ահաբեկչության» ու «անջատողականության» զոհի կեցվածք է ընդունել»— ասված է հանդեսում հրապարակված «Գիտություն» թերթի ողջույնի մեջ։

Հանդեսի գլխավոր խմբագիրն է Կարլենե Չաչանին։

---

# Պասակալյա. «Ո՞վ Հայոց աշխարհ...»

Այս հողում ես ոսկի չեմ փնտրում։ Բայց գանձ գտնում եմ ամեն օր։ Խորհրդավոր լռությամբ են պարուրված այս լեռները, քարանձավները, անտառը։ Լռություն, որ ասես հիմա ուր որ է կխզվի, լեռներից կիջնի քամին, կխշշա անտառը, արևածագից վարդագույն կհագնեն բարդիները, ու բնությունը կերգի զարթոնքի երգը՝ պասակալյան։ Մերթ ուրախ ու հպարտ, մերթ տխուր ու մտազբաղ, մերթ հանդիսավոր-հաղթական, մերթ դալկացած ու ողբերգական. պասակալյա։

**Ո՞վ Հայոց աշխարհ,**
**Հարազատ պայծառ...**

Քանիսն են եկել, ավերել, թալանել ու գնացել, բայց որքան կարծր, հպարտ ու նաև նուրբ սիրտ ունես, որ իմանալով, թե հրես նորից կգան բարբարոսները քանդելու, սրի ու հրի քաշելու քո շենը, դու կերտել ես, կառուցել, շենացրել աշխարհը։ Երգը, նախշը, գիրըն ու բանը կարող են լինել ազգային, բայց գիտե՞ք, արդյոք, որ լեռն ու ձորը, բարդին ու առուն նույնպես հայկական են այստեղ.

**Հարազատ պայծառ...**

Հազար անգամ անցել եմ այդ նույն քարակույտի կողքով։ Նրա կողքով անցել են հազարները։ Բայց մի պահ կանգնիր, անցորդ, ուշադիր նայիր այդ տձև, մոռացված քարաբեկորներին ու կզգաս, որ դրանք հուշեր ունեն պատմելու։ Ուշադիր զննիր այս մեկը՝ խաչակիրը։ Այստեղ վանք ու շեն է կառուցել քո խաչապաշտ նախնին, ու դարանակալած թշնամին սպասել է տեսք տաս քո կառուցածին, ավարտես, որ հետո քանդի, ապրի քանդելու, ավերելու հաճույքը, ստիպի քեզ ըզգալու կորստի կսկիծը։ Իսկ քո նախնյաց քարակուռ երկիրը մնացել է ու հիմա պատմում է քո կենսագրությունը, խաչքարը դարձել է քո անձնագիրը, այս տարածքը քոնը լինելու վավերագիրը։

**Ո՞վ Հայոց աշխարհ...**

Մենք վարժվել ենք հիանալ, զարմանալ հեռավոր ժողովուրդների քաղաքակրթությամբ, մեզ համար արժեքավոր են և՛ ացտեկների արվեստը, և՛ Բաբելոնն ու Կարթագենը, մենք կարող ենք հիանալ Լուքսորով ու Պալմիրայով, Վերսալով և Պարթենոնով։ Ու հաճախ չենք անդրադառնում, որ այդ «հեռավորը, զարմանալին ու առեղծվածայինը» հաճախ մեր կողքին է, մեր իսկ ստեղծածը։

Մենք այստեղ ենք եկել 1828-ին։ Լեռներով շրջապատված տափարակի վրա հիմնել մեր Ծուղրութ գյուղը ու կենտրոնում կառուցել մեր եկեղեցին։ Հետո, աշխարհը ճանաչելու համար, դուրս ենք եկել գյուղից, բարձրացել լեռները՝ տեսնելու համար, թե ինչ կա այն կողմում։ Բարձրացել ենք ու գանձեր գտել հենց բլրագագաթներին։ Դրանք հինավուրց ուխ վանքեր են, որոնց պատմությունը գալիս է դարերի խորքից, գերեզմաններ ու դամբարաններ կան, որոնց տարիքը հազարամյակներով են հաշվում ու խաչքարեր, քարեր, քանդակներ։ Ու պարզվել է, որ այստեղ, մեր գալուց շատ դարեր առաջ, դարձյալ մենք ենք եղել։ Ուրիշ էլ որտե՞ղ կարող են լինել այսքան խաչքարեր ու քարե այլ հուշարձաններ։ Ժողովուրդը շատ է տառապել չարից ու մեզ շատ սրտամոտ է վիշապին խոցող սուրբ Գևորգը։ Ի՞նչ հայեցի է հնչում այդ անունը, որին նվիրված վանքեր կան աշխարհի բոլոր անկյուններում, որտեղ հայ կա։ Ծուղրութի դիմացի բլրին ս. Գևորգ եկեղեցու ավերակներն են։ Վերցնում եմ քարաբեկորները, զննում մեկիկ-մեկիկ. ո՞վ ես դու, տաղանդաշատ վարպետ, որ քո սրտի ջերմությունն ու սերը փոխանցել ես այս ապառաժներին, դրանց լեզու տվել, դարձրել ես պատմիչ, օջախի ու հայրենիքի պաշտպան վկայագիր։

**Ո՞վ Հայոց աշխարհ...**

Մեր ընդդիմախոսներն ասում են, թե հայերը եկվորներ են, եկել, յուրացրել են հողը, եկեղեցի կառուցել ու հետո տարածքը համարել իրենց սեփականությունը։ Ասում են մեր հարևանները հարավից ու հյուսիսից, արևելքից։ Ճշմարիտ է, որ նրանք մեր մասին քիչ գիտեն, իրենք որտե՞ղ էին, որ մենք քարից արվեստ էինք ստեղծում ու հիմա... Հին դարերի հայաստան ու հայաշունչ վկաները դուրս են գալիս հողի 7 մետրանոց շերտի տակից, քարակույտ դարձած ավերակներից։ Փորձիր անցնել բլուրից բլուր ու դու, անցորդ, շատ բան կտեսնես։ Ահա մի առեղծվածային քանդակ՝ իրար միացած քարե երկու գլանանման բեկորներ, որոնք հիշեցնում են իրար կցված երկու տիեզերանավեր։ Ի՞նչ է դա... Ավա՜ղ, ոչ ոք չի կարող ասել։ Լռությունն է պարուրել մեր լեռնաշխարհը ու վտանգ կա, որ մենք թիզ առ թիզ, բեկոր առ բեկոր կորցնենք մեր արժեքները, գուցե և անդառնալի։ Իսկ չէ որ այստեղ մինչքրիստոնեական քաղաքակրթության հետքեր էլ կան՝ քարե կարաս, քարե ծաղկաման, քարե դամբարաններ։

Եթե այս հուշարձանները, քարե տիեզերանավը մեկ ուրիշ ազգի պատկանեին, վստահ եմ, լուրը կտարածեին աշխարհով մեկ, «իրենց ու տիեզերքի, իրենց նախնիների ու այլմոլորակայինների կապերի» մասին գրքեր կգրվեին ու կինոֆիլմեր կնկարվեին։ Իսկ դուք նայեք Ծուղրութ գյուղին մի փոքր երևակայությամբ։ Շուրջպար բռնած ոչ բարձր լեռնալանջեր, որոնք անտիկ ամֆիթատրոն են կազմել, պարսպի նման պարուրել գյուղը։ Ի՞նչ հիանալի հարմարություն հեռավոր քաղաքակրթությունից եկվորների համար։ Իսկ եթե հրաժարվենք երևակայությունից, ապա ինչպե՞ս բացատրել հին դարերի այդ վկայի՝ քարե «տիեզերանավի» հայտնվելը մեր տարածքում։

Կամ այս մեկը, որ գտել եմ հինավուրց սյունազարդ եկեղեցու ավերակների միջից։ Քարե մի կլոր գունդ, վրան՝ պարզ զարդեր։ Թեև գտածոն իր միջավայրից տեղափոխելն անթույլատրելի է, բայց այս մեկն այնքան հետաքրքրեց, որ տեղափոխեցի ու հանձնեցի Հնագիտության ինստիտուտ՝ ուսումնասիրության։ Կարծիքները տարբեր էին և իրարամերժ։ Մեկն այն հնադարյան կշռաքար համարեց (քաշը՝ 2100 գրամ է), մյուսը՝ քարե ական։ Մեր նախնիները փայտի հատուկ «հրանոթներով» քարե կարկուտ էին տեղում պաշարող թշնամու գլխին։ Այդ դեպքում ինչո՞ւ այսքան ջանք ու հոգնություն, ինչո՞ւ զարդարել ականը, նրան տալ գեղեցիկ տեսք։ Իսկ գուցե իրոք մեր տաղանդավոր վարպետների գործն է դա, որ քարե ցանկացած իր պատրաստելիս անպայման գեղեցկացրել, տեսք են տվել նրան։

Առեղծվածը կարոտ է ուսումնասիրության։ Քարակերտ եկեղեցու ավերակ, քարակերտ տիեզերանավ, քարե ական։

Իսկ հարևանությամբ՝ «Յոթ եղբայրներ» եկեղեցին։ Լսել եմ «Յոթ վերք» սրբավայրերի մասին, կարդացել հին հնդկական չակրամներում բուդդայական հրե «Յոթ ոլորանների» մասին։ Հիմա՝ «Յոթ եղբայրներ»։

Այս ամենը սպասում է իր տիրոջը՝ հետազոտողին, գիտնականին, կարոտ է ուշադրության։

Ասել, թե՝ «ոչինչ, մենք նման հուշարձաններ շատ ունենք, թող մի քիչ էլ կորի», ասել ու արդարացնել մեր հապաղումն ու անուշադրությունը, անթույլատրելի է։ Կորուստներ շատ ենք տվել ու տալիս՝ այսօր։ Քի՞չ են Արևմտյան Հայաստանի կորուստները։ Հիմա էլ կորցնենք այն, ինչ կա մեր հարևանությամբ, որոնք «այլ պետության» տարածքում են հայտնվել։ Իսկ այլ պետությունները չեն մոռանում ու չեն ուզանում մեր ստեղծածը իրենցը համարել։ Քարերից ու խաչքարերից ջնջվում են հայերեն արձանագրությունները, եկեղեցիների պատերին նոր «արձանագրություններ» են հայտնվում, իսկ մամուլն ու պատմագրությունը չեն ամաչում այդ «վերափոխումների» գիտական հիմնավորումները տալ։

Բայց կա, չէ՞, մի պարզ ճշմարտություն. **մեր տարածաշրջանում, որ Կովկաս ու Հայք է կոչվում, քարե մշակույթ միայն մենք ենք ստեղծել։** Թուրքն էլ իր գերեզմանոցում քարե ցցեր է տնկում, բայց անտաշ, անմշակ։ Մենք մեր հարևանների նման աղյուսե վանքեր չենք կառուցել։ Եվ անգամ «աղյուսե մշակույթի» կենտրոններում հայոց եկեղեցիներն ու հուշարձանները քարակերտ են։ Ու դրա շնորհիվ մնայուն են, հավերժ ու հայաշունչ...

**Ո՞վ Հայոց աշխարհ,**
**Հարազատ պայծառ...**

Գրել կարելի է շատ, կարելի է անվերջ պատմել մեր հնադարյան արժեքների մասին, կարելի է հուզվել, հիանալ, երազել։

Իսկ երևույթը գիտական մոտեցման կարիք ունի։ Գիտակա՞ն... Կգտնվի՞ այն հնագետը, որը չի տրտնջա «միջոցների աղքատությունից» ու կայցելի կործանման, կորստի եզրին գտնվող մեր հուշարձանները, գոնե լուսանկարելու, տեսագրելու, արձանագրելու, քանի ուշ չէ։ Վաղը կարող է ուշ լինել, վաղը կարող է արդեն ոչինչ չլինել։

Ո՞վ Հայոց աշխարհ,
Հարազատ պայծառ,
Զավակներիդ օթևան,
Հավերժական հանգրվան։

**ԱՐԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
Ախալցխա, Ծուղրութ

---

# Արյունը չի կորչում

Արցախյան շարժման ըսկզբնական օրերին ադրբեջանցի վայ գիտնականները նորից սկսեցին ավելի բարձրաձայն հորջորջել, թե արցախցիների նախնիներն իրենց ցեղակիցներն են եղել, իսկ գրողների միության առաջին քարտուղար Անարն էլ հայերին վարկաբեկող հոդված տպագրել տվեց Ֆրանսիայի «Ֆիգարո» թերթում։

Երևանի Յոլյանի անվան արյան փոխներարկման ինստիտուտի իմունաբանական լաբորատորիայի վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վալենտինա Մկրտչի Ներսիսյանի ուղեղում փայլուն միտք ծագեց. այդ կեղծիքը հերքել գիտականորեն՝ արյան խմբերի և ռեզուս գործոնների միջոցով հետազոտել ազգերի արյան իմունոգենետիկ հատկությունները։

Եվ 1990—1992 թթ. նա իր կոլեգաների հետ ուսումնասիրեց Արցախի բնակիչների (հայերի, ադրբեջանցիների, ռուսների) արյան խմբերի ռեզուս պատկանելիությունը, ստացած տվյալները համեմատեց տարբեր ժամանակներում այլ ազգերի մոտ ուսումնասիրված նմանատիպ տվյալների հետ և եկավ այն եզրակացության, որ Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում, Վրաստանում, Ֆրանսիայում, Լիբանանում, Թուրքիայում և այլուր բնակվող հայերի մոտ արյան խմբային և ռեզուս գործոնի տվյալները համարյա նույնն են և խստորեն տարբերվում են Վրաստանում, Ադրբեջանում, Լեռնային Ղարաբաղում բնակվող ադրբեջանցիների նմանատիպ տվյալներից։

1994 թ. թվերի լեզվով խոսող աղյուսակով իր հոդվածը տպագրվեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի «Գենետիկա» հանդեսում, որը լայն արձագանք գտավ նաև արտասահմանում։

Գիտականորեն հիմնավորված անհերքելի փաստը կարծես փակեց ադրբեջանցի վայ մտավորականների բերանները։

Այժմ տպագրության են հանձնված Լեռնային Ղարաբաղի հայերի մոտ էրիթրոցիտների մի շարք իմունոգենետիկ համակարգերի գործոնների ուսումնասիրության տվյալները։

1996 թ. փորձեցի Երևանում Արցախի հարցով զբաղվող այրերից մեկի ուշադրությունը հրավիրել մեծ գիտնականի հայտնագործության վրա՝ հայցելով նրա օգնությունը՝ գիտնական-բժշկուհու գործունեությունը խթանելու համար։ Անտարբերությունը սպանիչ էր։

Վալենտինա Ներսիսյանի ղեկավարած լաբորատորիայում կատարված ուսումնասիրությունները ներդրվել են բժշկագործնական աշխատանքներում։

Գիտական այդ աշխատանքներն ունենալու պահանջով Երևանի արյան փոխներարկման ինստիտուտին դիմել են նախկին Միության ավելի քան 100 քաղաքների կենտրոնական գրադարաններ և համապատասխան ինստիտուտներ։

Միայն 1997 թ. այդ աշխատանքներն ունենալու պահանջով են դիմել ավելի քան 10 արտասահմանյան երկրների ինստիտուտներ։ Ցավոք, դրանց մեջ հայաստանյան հասցեներ չկան։

**Իլյա ԱՐՑԱԽՑԻ**

# Մեր հարևան Իրանը

20-րդ դարը մոտենում է ավարտին: Նոր դարաշրջանը՝ 21-րդը, պետք է դառնա ոչ միայն գիտատեխնիկական առաջընթացի, նոր տեխնոլոգիաների ներդրման, մեծագույն հայտնագործությունների ժամանակաշրջան, այլև այն պետք է հաստատի նոր հարաբերություններ՝ երկրների, ժողովուրդների, մարդկանց միջև: Նոր հարաբերություններ, որոնք պետք է բացառեն խտրականությունն ու նախապաշարումները երկրների միջև, հաստատեն իրավահավասար համագործակցություն՝ հանուն խաղաղ զարգացման, հանուն մարդկային ցեղի բարգավաճման: Այդ ամենին հասնելու համար այսօրվանից արված քայլերը խիստ կարևոր են: Հայ-իրանական բարեկամությունը դրա վառ վկայությունն է: Այն դարձել է տարածաշրջանի կայունության կարևորագույն գործոնը, որը թեև ուղղված չէ որևէ երրորդ երկրի դեմ, բայց հակակշռում է կայունությունը խախտող որոշակի ուժերի ախորժակը: Իրանը մեզ համար միայն պատուհան չէ դեպի մեծ աշխարհ, միայն տնտեսական գործընկեր չէ կամ երկիր, ուր բարգավաճում է հայ համայնքը: Աշխարհի առաջին իսլամական պետությունը և աշխարհում առաջինը քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակող պետությունը ցույց են տալիս իրար կողքի խաղաղ ապրելու, միմյանց արժեքները հարգելու փայլուն օրինակ: Ու մեր այս էջը ու գալիք մեր հրապարակումները՝ նվիրված մեր հարևան Իրանին, թող դառնան այդ բարեկամության շղթան ամրացնող օղակներից մեկը:

## Կապույտ մզկիթի վերածնունդը

Եվս 1 տարի, և կավարտվի Երևանի «Կապույտ մզկիթի»՝ 18-րդ դարի պարսկական ճարտարապետության հուշարձանի վերականգնումը: Հայ և պարսիկ ճարտարապետների ջանքերով արդեն իր նախնական տեսքն է ստացել գլխավոր գմբեթարդ մեհրաբը: Կառույցի արևելյան, արևմտյան թևերը ամրացված են, վերականգնված: Այժմ կատարվում է մինարեթի ներքին հարդարումը, վերականգնվում է ջնարակապատ աղյուսների շերտը: Հյուսիսային մեհրաբի վերակառուցման նախագիծը կազմելու նպատակով կատարվում են հնագիտական հետազոտություններ, պեղումներ, մաքրվում են փլատակները:

Ինչպես Արմենպրեսի թղթակցին հայտնեց Հայաստանի մշակույթի նախարարության հուշարձանների վերականգնման վարչության վերականգնող-ճարտարապետ Գրիգոր Նալբանդյանը, ամբողջ շինանյութը՝ երեսպատման աղյուսները, գեղարվեստական սալիկները, ջրամեկուսիչ և ջերմամեկուսիչ նյութերը, փոքր մեխանիզմները բերվել են Իրանից: Պարսկական մշակույթին ու ճարտարապետությանը բնորոշ կոնկրետ աշխատանքներ իրագործելու համար հրավիրված են իրանցի մասնագետներ, որոնք այժմ աշխատում են հայ վերականգնողների, քարտաշ-վարպետների, բանվորների հետ համատեղ: Պարսկական կողմն իր վրա է վերցրել բոլոր տեսակի նախագծային և շինարարական աշխատանքների ֆինանսավորումը:

Գ. Նալբանդյանը նշեց նաև, որ մշակութային մեծ արժեք ունենալուց բացի, մզկիթի վերականգնման աշխատանքը կարևոր է պատմահնագիտական հետազոտությունների առումով, քանի որ մեհրաբի պատերի շերտերը ուսումնասիրելիս հայտնաբերվել են հետաքրքիր գրառումներ, արձանագրություններ, որոնք տեղեկություններ են տալիս Հայաստանում ուշ միջնադարի որոշ իրադարձությունների, կոնկրետ փաստերի վերաբերյալ:

## «Կենտրոնական Ասիա և Կովկաս»

Իրանի արտգործնախարարությանը կից «Կենտրոնական Ասիա և Կովկասի ուսումնասիրությունների կենտրոն»-ի օրգան «Կենտրոնական Ասիա և Կովկաս» պարբերագրքի համարներից մեկում, ի թիվս այլ հետաքրքիր նյութերի, հրապարակվել են երկու հայագիտական հոդված՝ «Հայկական ինքնությունը և էթնիկական տարածքի խնդիրները (հայագիտական մի քանի ուսումնասիրության համառոտ գնահատական)» և «Հայերի ծագումը ըստ հունահռոմեական աղբյուրների»: Առաջինի հեղինակն է Թեհրանի միջազգային հարաբերությունների ինստիտուտի գիտական խորհրդի անդամ և Իրանի ԱԳՆ-ին կից քաղաքական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոնի կազմակերպությունների և միջազգային իրավունքի գիտահետազոտական խմբի վարիչ, դոկտոր Սեյյեդ-Քազեմ Սաջջադփուրը: Աշխատանքը վերջին տարիներին Արևմուտքում անգլերենով հրատարակված Ռուբեն Ադալյանի, Դեյվիդ Լանգի, Մարի Թերզյանի և Քրիստոֆեր Վոլքերի ուսումնասիրությունների համառոտ տեսությունն է: Երկրորդ հրապարակումը պատկանում է Թեհրանի հումանիտար գիտությունների և մշակութային հետազոտությունների կենտրոնի գիտաշխատակից տիկին Ռոշիե Բեհզադիի գրչին և ներկայացնում է հայերի վաղ շրջանի պատմության չափազանց սեղմ մի ակնարկ:

Անկախ հիշյալ հրապարակումների գիտական մակարդակից, ուրախալի է նշել, որ կարծես Իրանում վերջին շրջանում հետզհետե սկսում է ձևավորվել հայագիտական որոշակի ուղղություն, որն ունենալով, ինչ խոսք, քաղաքական ենթահիմք, հետագայում անշուշտ բերելու է ակադեմիական արդյունք: Իրանցի հայագետներին այսօր պակասում է հայկական և ռուսալեզու աղբյուրների իմացությունը, որն անհրաժեշտ նախապայման է լուրջ հայագիտության զարգացման համար:



## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**ՕՆԻԿ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԸ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող է, պատմական գիտությունների թեկնածու: Երկար տարիներ ապրելով Իրանում, նա հաղորդակից է եղել մեր հարևան պետության կյանքին, ժողովրդի կենցաղին, ավանդույթներին և գալով Երևան, շարունակել է ուսումնասիրել այդ հինավուրց ժողովրդի, մեր հարևանի պատմությունը, իրանահայ գաղութի կյանքը: Վերջերս լույս տեսավ նրա «Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրությունը և պետական կառուցվածքը» գրքույկը, որի համար Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատունը հեղինակին պարգևատրեց ոսկե հուշամեդալով:**

**Ստորև հատվածներ ենք հրապարակում սույն մենագրությունից:**

20-րդ դարի Իրանի պետականության համար կարևոր նշանակություն են ունեցել 1905-1911 և 1978-1979 թվականների սահմանադրությունները: 1905-1911 թթ. սահմանադրական հեղափոխությունից հետո Իրանը դարձավ խորհրդարանական միապետություն: 1906 թ. դեկտեմբերին հաստատվեց նրա հիմնական օրենքը՝ սահմանադրությունը, իսկ 1907 թ. նոյեմբերին՝ լրացուցիչը: Հիմնական օրենքը բաղկացած էր հինգ գլուխներից՝ 51 հոդվածով:

Հիմնական օրենքին կից լրացուցիչ օրենքը Իրանի սահմանադրության կարևոր մասն էր, որն ընդգրկում էր տասը գլուխներ՝ 107 հոդվածներով: Դրանք են ընդհանուր որոշումներ, ժողովրդի, խորհրդարանի և ծերակույտի անդամների, միապետության ինստիտուտի, նախարարների, դատական իշխանությունների, գավառական և մարզային խորհուրդների (անջումանների) իրավունքները, ինչպես նաև հոդվածներ ֆինանսների և բանկի վերաբերյալ:

1978-1979 թթ. Իրանի սահմանադրության մեջ էական փոփոխություններ չեն կատարվել, միայն որոշ ուղղումներ են եղել, որոնք հիմնականում վերաբերում էին շահի արտոնություններին՝ կապված Ղաջարների դինաստիայի տապալման (1925 թ.) և Ռեզա շահ Փահլավիին ժառանգական շահ հռչակելու հետ:

1949 թ. սահմանադրական ժողովի կողմից մտցված փոփոխությունները ընդլայնեցին շահի լիազորությունները, իսկ 1957 թ. նրան տրվեց վետոյի իրավունք: 1967 թ. նա ստացավ բացառիկ լիազորություններ՝ դառնալով երկրի լիակատար միապետը, որոշելով անգամ իր ժառանգորդին:

Նախահեղափոխական Իրանը գտնվում էր շահի միահեծան իշխանության ներքո. սահմանադրական նորմերը երկրում չէին գործում:

ԻԻՀ հռչակումից հետո 1979 թ. մարտին, նոր սահմանադրության և պետականության ձևավորման խնդիրը դարձավ օրվա հրատապ հարցը: Այդ կապակցությամբ մամուլում իրենց նախագծերով և առաջարկություններով հանդես եկան երկրի քաղաքական տարբեր ուղղությունների ներկայացուցիչները:

1979 թ. հունիսին հրապարակվեց իրանական իրավագետների մասնակցությամբ կազմված սահմանադրության նախագիծը, որը քննարկվեց մամուլում: Բարձր հոգևորականությունը սահմանադրական օրենքների վերջնական քննարկման համար ստեղծեց «Փորձագետների խորհուրդ» (մաջլես-ե խոբրեգան): Այդ խորհրդին, իբրև կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչ, մասնակցեց մեջլիսի առաջին գումարման հյուսիսային շրջանի պատգամավոր Հրայր Խալաթյանը:

1979 թ. դեկտեմբերին հրատարակվեց ԻԻՀ սահմանադրությունը՝ կազմված 12 գլուխներից և 175 հոդվածներից: 1980 թ. կատարված ուղղումներից հետո գլուխների թիվը հասավ 14-ի, իսկ հոդվածներինը՝ 177-ի:

Ղուրանի պատվիրանների և շարիաթի օրենքների հիման վրա կազմված սահմանադրության համաձայն ԻԻՀ-ն իրենից ներկայացնում է մի համակարգ, որն ամբողջովին հիմնված է կրոնական գաղափարախոսության վրա, բոլոր հոդվածները, օրենքներն ու որոշումները բխում են իսլամի սկզբունքներից:

Համաձայն իսլամական սահմանադրության 12-րդ հոդվածի Իրանի պաշտոնական կրոնը համարվում է 12 իմամական շիա ուղղությունը (շի՛է-յե սանաաշարի), որը, ըստ հիմնական օրենքի, ընդմիշտ մնալու է անփոփոխ: Սակայն մահմեդականության մյուս ուղղությունները նույնպես ճանաչվում են որպես օրինական:

### ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բացի վերը քննարկված հոդվածներից, Իրանի նոր սահմանադրության մեջ տեղ են գտել քաղաքացիների իրավունքների, արտոնությունների վերաբերյալ օրենքներ: Այսպես, հիմնական օրենքով արգելվում է անձի արժանապատվության, կյանքի, ունեցվածքի, իրավունքների, բնակավայրի, աշխատանքի նկատմամբ ոտնձգությունները՝ բացառությամբ օրենքից բխող դեպքերի (հոդ. 22): Խստիվ արգելվում է այս կամ այն գաղափարախոսությանը հարելու համար անձի հետապնդումը (հոդ. 23):

Թույլատրվում է մտքերի արտահայտումը մամուլում և այլ կարգի հրապարակումներում, սակայն արգելվում է հակաիսլամական քարոզչությունը (հոդ. 24):

25-րդ հոդվածում խստիվ արգելվում է հեռախոսազրույցների բացահայտումը, նամակների ընթերցումը, դրանց, ինչպես նաև հեռագրերը, տելեքսի բովանդակությունը հասցեատիրոջը չհանձնելը, բացառությամբ օրինական դեպքերից:

Թույլատրվում է քայլարշավներ, հանրահավաքներ՝ առանց զենքի, առանց իսլամական օրենքներին հակադրվելու (հոդ. 27): Չի թույլատրվում անհիմն կերպով ձերբակալել քաղաքացիներին, իսկ ձերբակալման դեպքում պետք է գրավոր հիմնավորվի ձերբակալման պատճառը և 24 ժամվա ընթացքում հայտնվի տուժողին՝ չձգձգելով հետաքննությունը (հոդ. 92):

Ոչ ոք չի կարող աքսորվել իր բնակավայրից՝ բացառությամբ օրենքով սահմանված անհրաժեշտ դեպքերի (հոդ. 33):

Խստիվ արգելվում է մեղադրական խոստովանություն կորզելու նպատակով պատժամիջոցների կիրառումը, այլապես խոստովանությունը կհամարվի անհիմն (հոդ. 38):

Արգելվում է արտասահմանյան մասնագետների հրավիրումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ միայն մեջլիսի թույլտվությամբ (հոդ. 82):

Մեջլիսի պատգամավորներըն իրենց գործունեությամբ հաշվետու են բնակչության առաջ (հոդ. 84):

Նախագահը, նախարարները և պետական պաշտոնյաները պետական հիմնարկներում աշխատանքը համատեղելու իրավունք չունեն՝ բացի գիտական և ուսումնական հաստատություններից (հոդ. 141):

Պետությունը պարտավորվում է միջնակարգ դպրոցներում լիովին ապահովել անվճար ուսուցում, իսկ բուհերում՝ հնարավորության սահմաններում (հոդ. 30):

### ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ԻԻՀ սահմանադրության 19-րդ հոդվածում նշված է, որ Իրանի ժողովուրդը առանց ազգային և կրոնական խտրականության, ունի հավասար իրավունքներ, և մաշկի գույնը, էթնիկ պատկանելությունն ու լեզուն իրավունք չեն վերապահում որևէ խմբի իրեն վերադասելու մյուսներից, օրենքըն ազգություններ կամ ազգային բաժանումներ չի ճանաչում: Սա է պատճառը, որ երկրում բնակվող ոչ մահմեդական ազգերը ճանաչվում են որպես կրոնական փոքրամասնություններ և ոչ իբրև ազգային միավորներ:

Իրանի Իսլամական Հանրապետության հիմնական օրենքում կրոնական փոքրամասնությունների իրավունքները տեղ են գտել 13, 15, 26 և 64-րդ հոդվածներում:

13-րդ հոդվածի համաձայն, «Իրանցի զրադաշտականները, հրեաները և քրիստոնյաները ճանաչվում են միակ կրոնական փոքրամասնություններ»: Սրանք ևս, ինչպես մահմեդական ուղղությունները, «օրենքի սահմաններում ազատ կերպով կարող են կատարել իրենց ծեսերը, անձնական հարցերի լուծման և կրոնի ուսուցման ժամանակ առաջնորդվել սեփական օրենքներին համապատասխան»: Երկրում ճանաչվում են թե՛ քրիստոնեությունը և թե՛ հայոց եկեղեցին:

Իրանի քրիստոնյա ազգերը կարող են օրինական կերպով իրենց դավանանքը տարածել ոչ մահմեդական շրջաններում:

Այսպիսով, ԻԻՀ սահմանադրությունը դավանանքի կատարյալ ազատություն է շնորհում Իրանում բնակվող ազգային փոքրամասնություններին, այդ թվում նաև հայերին:

Սահմանադրության 18-րդ հոդվածում նշված է. «Իրանի ժողովրդի լեզուն և գիրը պարսկերեն է, և պաշտոնական գրագրությունը, նամակագրություններն ու դասագրքերը պետք է գրվեն այդ լեզվով ու գրով, սակայն պարսկերենի հետ զուգահեռ տեղային և ազգային լեզուները կարող են ազատորեն օգտագործվել մամուլում, միմյանց հետ հաղորդակցվելիս, ինչպես նաև այդ լեզուներով գրականություն դասավանդելիս»:

Ազգային լեզվով գրականություն դասավանդելու և պարբերական մամուլ լույս ընծայելու իրավունքի պաշտոնական ճանաչումը հայերի համար աննախընթաց նվաճում է: Սակայն նշված հոդվածը չի արձանագրում մայրենի լեզվով կրթություն ստանալու պարագան:

26-րդ հոդվածում, որում ընդհանուր առմամբ, խոսվում է կուսակցությունների, կազմակերպությունների ու միությունների ազատության մասին, պետության կողմից ճանաչում գտած կրոնական փոքրամասնություններին, այդ թվում և հայերին, իրավունք է վերապահվում ունենալու իրենց կրոնական խորհուրդները: Սակայն դրանք չպետք է խախտեն Իսլամական Հանրապետության օրենքին վերաբերող որևէ հոդված:

Մտնելով երկրի օրենսդիր օրգանների մեջ կրոնական փոքրամասնություններն ի վիճակի կլինեն մասնակցելու իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի ընտրությանը:

Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրության 64-րդ հոդվածը լայն հնարավորություններ է տալիս կրոնական փոքրամասնություններին. «Զրադաշտականները և հրեաները մեջլիսում կարող են ունենալ մեկական, քրիստոնյա ասորիները և քաղդեացիները միասնաբար՝ մեկ, իսկ Հյուսիսային և Հարավային թեմերի հայերը՝ մեկական պատգամավոր»: Թեպետ ընտրական նախկին օրենքով ևս հայերին իրավունք էր վերապահվում ունենալու երկու ներկայացուցիչ, սակայն այդ իրավունքը վավերացված էր լրացուցիչ օրենքով, իսկ այժմ այն տեղ է գտել նոր սահմանադրության մեջ:

Հակառակ շահական իշխանության օրոք Իրանի մեջլիսում հայ պատգամավորների ոչ ակտիվ դերին, Իսլամական Հանրապետության ժամանակաշրջանում, ներկայիս հյուսիսային և հարավային շրջանի պատգամավորներն իրենց ակտիվ գործունեությամբ հաճախ են անդրադառնում համայնքի առաջադրած հրատապ խնդիրներին՝ հավասարապես մասնակցելով երկրի հասարակական- քաղաքական կյանքին:

Սահմանադրության 14-րդ հոդվածը երկրի մահմեդականներին պարտավորեցնում է արդարացի և բարյացկամ վերաբերվել այլադավան ազգերին:

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՃԱՄՓԱՆԵՐՈՎ

## 2. ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Այս տարվա հուլիսին մասնավոր հրավերով եղա Իրանի Իսլամական Հանրապետությունում, ու երկու շաբաթ հետաքրքիր ուղևորություններ կատարեցի հին-արևելյան քաղաքակրթության այս դասական երկրում, ծանոթացա ինչպես պարսկական, այնպես էլ հայկական ճարտարապետության հուշարձաններին: Հիացմունքով դեգերեցի Աքեմենյան Պարսկաստանի հնավայրեր Պիրսագադը, Պերսեպոլիսը, Նակշի-Ռուստեմ ժայռափոր դամբարանների խումբը, որոնք ոչ միայն ճարտարապետության, այլև մոնումենտալ քանդակագործության բարձրարվեստ կոթողներ են: Լավ տպավորություն ստացա դրանց պահպանության, կոնսերվացման ու թանգարանացման ուղղությամբ (մասամբ իտալացի մասնագետների կողմից), իրականացված միջոցառումներից:*

*Փոխադրվելով Սպահան, որի հարավում Շահ-Աբասի հովանավորությամբ 1606 թ. հիմնադրվել է Նոր Ջուղա հայկական բնակավայրը (արդեն ձուլվել է Սպահանի հետ), մի ամբողջ օր նվիրեցի դրա մշակութային ու հոգևոր օջախներին ծանոթանալուն: Հայկական Նոր Ջուղայում հայ հավատացյալների առաջ իրենց դռները բացում են ս. Ամենափրկիչ և 12 այլ եկեղեցիներ: Ս. Ամենափրկիչ վանքը մի ընդարձակ համալիր է՝ տեղավորված բարեկարգ բակի շուրջը: Բացի փոքր-ինչ պարսկաոճ, ներսույթում որմնանկարներով պատած մայր տաճարից, բակի տարբեր կողմերում տեղավորված են առաջնորդարանը, թանգարանը, գրադարանը, տպարանը, ազգայինների խորհրդի շենքը, բակի մի անկյունում՝ եղեռնի հուշարձանը: Նոր Ջուղայում գործում են դպրոցներ, գրադարաններ, մշակութային և բարեգործական միություններ ու գլխավոր հավաքատեղին՝ «Արարատ» ակումբը, իրեն կազմի մեջ մտնող տարբեր մարզաձևերի շենքերով:*

*Հաջորդ օրը հատկացրի Սպահանի Սեֆևյան ժամանակաշրջանի պարսկական ճարտարապետության հրաշալիքների այցելությանը: Տեսածներս՝ Ջայանդեռուդ գետի վրա ձգված բազմաչք կամուրջները (մեկը՝ հայի կառուցած), «Մեյդանե իմամ» քաղաքաշինական լայնածավալ անսամբլը, իր կազմի մեջ մտնող մզկիթներով, Շահ-Աբասի բազմահարկ պալատով ու առևտրական փողոցներով, «40 սյունանոց» և ճոճվող զույգ մինարեթներով: Մզկիթները հիրավի պարսկական շքաղյուսյան ճարտարապետության և շինարվեստի անգուգական կերտվածքներ են, որոնք խնամքով նորոգվել ու պահպանվում են՝ դեպի իրենց ձգելով բազմահազար զբոսաշրջիկներ:*

*Պարսկաստան հրավիրվելուս գլխավոր նպատակը դեպի ս. Թադեի և Դարաշամբի ս. Ստեփանոս Նախավկայի վանքերը տեղի ունենալիք ուխտագնացություններին մասնակցելն էր, ինչը պիտի հնարավորություն ընձեռեր թեկուզ հպանցիկ ծանոթանալու պարսկահայքի նշանավոր այդ երկու վանքային համալիրներին, դրանցում կատարվող վերանորոգման աշխատանքներին: Հյուրընկալիս՝ պ-ն Հեմվել Ավետյանի ընտանեկան խմբի կազմում Թեհրանից օդանավով մեկնեցի Թավրիզ, այնտեղից ավտոբուսով դեպի հիշյալ վանքերը՝ մասը կազմելով բազմահազար ուխտավորների ու այդ վանքերն այցելող Տանըն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի՝ հանդերձ իր բարձրաստիճան հոգևորականներից ու ազգային գործիչներից բաղկացած շքախմբի:*

*Երկու վանքերում էլ պարսկական կառավարության հովանավորությամբ ու աջակցությամբ, պարսկահայ համայնքի նյութական միջոցներով, ճարտարապետ Վարուժան Առաքելյանի նախագծով ու անմիջական ղեկավարությամբ (մասամբ՝ նաև իր միջոցների ներդրմամբ), ընթանում են վերանորոգման ու ամրացման դժվարին աշխատանքներ: Ինչպես ռուսներն են ասում «ձկնորսը ձկնորսին տեսնում է հեռվից»: Վարուժան Առաքելյանի բարի գործերի մասին տեղյակ էի հեռվից, վերջապես առիթ ունեցա ծանոթանալու տեղում: Կատարյալ սխրանք է այսպիսի դժվարին պայմաններում (երկու վանքերն էլ գտնվում են Թավրիզից բավականին հեռու, այժմ անմարդաբնակ դարձած վայրերում), կազմակերպել հուշարձանների վերանորոգման մեծածավալ ու բարդ աշխատանքներ: Այդ է պատճառը, որ պարսկահայ համայնքը բարձր է գնահատում նրա ազգանվեր գործունեությունը: Ընտրվել է Թեհրանի հայ համայնքի ատենապետ:*

*Չեմ կարող իմ հիացմունքն ու երախտագիտությունը թաքցնել այն բանի համար, որ Իրանի իշխանությունները ժամանակակից ճանապարհ են կառուցում դեպի ս. Թադեի վանքը: Բախտը ժպտաց ինձ և ես մաս կազմեցի մի խմբի, մեկնելու համար դեպի Սոր-ծոր ու Թադեի վանքը, կտրելով մոտ 100 կմ ճանապարհ: Գիշերեցինք Մակու քաղաքի հյուրանոցում, ապա դժվարանցելի ճանապարհով հասանք նպատակակետին: Այստեղ ես ականատես եղանք արվեստակից ընկերոջ՝ Վարուժանի մի այլ՝ ավելի սխրալից գործունեության արդյունքին: Տեղում գտնվող հայկական եկեղեցին (14-րդ դար), կմնար մի ընդարձակ տարածքում ստեղծվող ջրամբարի տակ: Վարուժանը հիմնավորել է այն փոխադրելու և մի այլ տեղում վերստին հավաքելու անհրաժեշտությունը, ստանալով պարսկական կառավարական մարմինների համաձայնությունն ու օժանդակությունը: Եվ ահա մենք ականատես ենք Սոր-ծորի եկեղեցու համարյա ավարտուն վիճակին: Բարձր գնահատելով Վարուժանի հիրավի հերոսական ջանքերը, ակամա հիշեցի նույն կարգի՝ Ախուրյանի ջրամբարի կառուցման հետ կապված պատմությունը: Դրա ջրերով ծածկվող տարածքում էր գտնվում միջնադարյան գլուխ-գործոց՝ Ջրափի կամուրջը (որի կեսն էր մնացել Ախուրյանի աջ ափին): Հայ հիդրոշինարարների միջոցով բանակցություններ կատարվեցին Կարսի նահանգապետի հետ՝ թույլատվություն ստանալու համար այդ կառույցը փրկել ջրով ծածկվելուց, փոխադրել մի այլ տեղ: Պատասխանը եղավ միանշանակ՝ «մերն է, թող մնա ջրի տակ»:*

*Վերը հիշատակված վայրերն այցելելիս, անցանք Արաքսի ափերով, դիտեցինք ու լուսանկարեցինք մյուս ափին գտնվող Նոր Ջուղայի գերեզմանատունը (կարծես անվթար է մնացել), դիտեցինք ու լուսանկարեցինք Արարատ լեռը:*

*Կատարածս ուղևորությունների ընթացքում համակվեցի այն համոզմամբ, որ իսլամական այս երկրում վերաբերմունքը հանդեպ հայ համայնքն ու նրա հոգևոր մշակութային օջախները, այլ է, նման չէ Թուրքիայինին: Ուրեմն, մեղավորը իսլամը չէ, այլ Թուրք իշխանություններն են, որոնք շարունակում են հայատյաց քաղաքականությունը:*

Վարազդատ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ակադեմիկոս, պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության նախագահ



Ս. Թադեի վերականգնված վանքը:

# ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Ըստ հավաստի աղբյուրների, ՀՀ վարչապետի կարգադրությամբ՝ Լորիս Ճգնավորյանից ետ է վերցվել «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահի մենաշնորհը և վերադարձվել ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությանն ու նրա ենթակայության Հայպետֆիլհարմոնիային:

Լորիս Ճգնավորյանը հրավիրում է լրագրողներին, որպեսզի նրանց բացատրի մեծ համերգասրահի իր «հրաժարականի» մասին:

Այսպիսով, կարծես թե ավարտվեց Լորիս Ճգնավորյանի և Հայֆիլհարմոնիայի «անօթևան» մնացած խմբերի յոթնամյա «պատերազմը», որի արդյունքում սակայն, «պարտվող» կողմը չի հեռացվում ասպարեզից: Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը, որն այդ անցած շրջանում գրեթե հեղափոխություն է կատարել Հայաստանում և Հայաստանից դուրս հայկական սիմֆոնիկ երաժշտությունը մասսայականացնելու գործում մեծ համերգասրահում կունենա իր փորձերի ու համերգների օրերն ու ժամերը:

Միայն մի հարց է ծագել, որ մշուշոտ է. կմնա ֆիլհարմոնիկի ղեկավարի դերում Լորիս Ճգնավորյանը, թե մենք նորից ականատես կլինենք այնպիսի սիմֆոնիկ համերգների (նաև՝ այլ համերգների), որոնց ժամանակ ինչպես նախկինում՝ բեմում երաժիշտներն ավելի շատ կլինեն, քան դահլիճի ունկնդիրները:

⁂

Արմենպրեսի թղթակից Վանիկ Սանթրյանի այս հաղորդագրությանը հետևեց Լ. Ճգնավորյանի լրագրողների հետ մեկ այլ հանդիպում, որի ժամանակ նա հայտնեց ֆիլհարմոնիկ նվագախմբի ղեկավարի պաշտոնից իր հրաժարականի մասին:

Վերջապես ամեն ինչ ընկավ բնական հունի մեջ: Անբնական էր, որ եռանդուն, գործունյա, հանրածանոթ արվեստագետը պահպանեց, միջազգային ասպարեզ հանեց հայ սիմֆոնիզմը: Հիմա ֆիրհարմոնիկին պետք են ձեռներեց, լըրբոտ, մարզադաշտերում սուլոց-հարայ-հրոցներով շռուներ կազմակերպողներ: Չէ՞ որ նրանք այնքան ներդաշնակվում են հայաստանյան այսօրվա համայնապատկերին:

# Ազգային զարթոնքի հոգևոր հայրերը

Վան-Վասպուրականում 19-րդ դարի երկրորդ կեսում ծավալված կրթական-լուսավորչական ու քարոզչական վիթխարի գործունեությամբ առանձնանում են երկու հզոր անհատներ՝ Խրիմյանն ու Փորթուգալյանը, որոնք զգալով ժամանակի թելադրանքը, նվիրվեցին գավառահայության շրջանում կրթության և լուսավորության, ազգասիրության ու մշակույթ տարածելու անչափ դժվարին ու վտանգներով հղի գործին, քանզի սուլթանական վարչակարգը նման բոլոր ձեռնարկումները դիտում էր որպես չար ու թշնամական:

Խրիմյան Հայրիկը ծնունդով վանեցի էր, Վասպուրական աշխարհի հող ու ջրի զավակ: Նրա ազգային-քաղաքական բուռն գործունեությունը սկըսվեց 1850-ական թթ. կեսերից: Սկսվեց բուռն, հուժկու և սրընթաց:

Եվ գավառահայության այն ժամանակվա հեղձուցիչ մըթնոլորտում «...Մի ձայն միայն հնչում էր բարձր ու խրոխտ, այդ վեհերոտ, մեղկացուցիչ լռության մեջ, հնչում էր մարդկային արժանապատվության լիակատար գիտակցությամբ, առանց բնավ սողալու, շոյելու, երկրպագելու, առանց բնավ վարագուրելու հայկական արյունաներկ ու անիծակուռ դժոխքը» (Միք. Վարանդյան, Հայկական շարժման նախապատմություն):

Այդ ձայնը լսվում էր Վասպուրականից, Վարագա բարձունքներից, ուր «...թառել էր Արծիվը գուտենբերգեան մեքենան շալակած... Խրիմյանն էր... հայության խիղճը, նրա իղձերի սգավոր ու ցավատանջ թարգմանը» (Միք. Վարանդեան, նույն տեղում):

Վարագա վանքում Խրիմյանը հիմնեց նոր տիպի դըպրոց՝ ժառանգավորաց վարժարանը, որի բացումը եղավ 1857 թ. մարտի 1-ին: Սակայն Վարագում Խրիմյանի բազմաբեղուն գործունեության թագն ու պսակը հանդիսացավ «Արծվի Վասպուրական» հանդեսի հրատարակությունը, որը լույս է տեսել ութ տարի: Այն եղավ Վասպուրականի առաջին տըպագիր օրգանը: Խրիմյանի հրատարակած հանդեսը պատմում էր ժողովրդի ծանր հոգսերի ու ցավերի մասին, ընթերցողին կապում հայրենական սրբությունների հետ, դատապարտում պանդխտությանը:

Վանում Խրիմյանի գործունեության երկրորդ արգասավոր շրջանը սկսվեց 1879 թըվականից, երբ նա «...Վանի առաջին սահմանադրական Առաջնորդ ընտրվեց 49 երեսփոխանների քվեով»: 1877—78 թվականներին ռուս-թուրքական պատերազմից հետո Վանում սով էր սկսվել, և Խրիմյանը նշանակվեց Սովելոց հանձնաժողովի նախագահ: Երկու տարվա ընթացքում Խրիմյանը վիթխարի ազգօգուտ գործ կատարեց՝ սովի ճիրաններից փրկելով հազարավոր հայերի կյանք:

Խրիմյանը քաջ գիտակցում էր, որ ինքը ցանում է հավաքական ըմբոստության և ազգային փոթորիկի սերմերը: Ինքըն իրենով մարմնավորելով Վանա աշխարհի և համայն հայության լուսավոր երազները ու իղձերը, բովանդակ կյանքում մաքառելով համազգային նպատակների իրագործման համար, Խրիմյանը պարզ հոգևորականից վերաճեց ազգային հերոսի: Իրավ ճշմարիտ է, որ ՀԱՅՐԻԿ պատվանունը յուրաքանչյուր ազգի մեջ վիճակվում է միայն մեկին:

Թուրքական կառավարության համար այլևս անընդունելի էր դարձել Խրիմյանի հետագա ներկայությունը Վանում: Եվ նոր կուսակալ Հասան Փաշայի կարգադրությամբ 1885 թ. ապրիլին Խրիմյան Հայրիկը աքսորվում է Վանից:

Մեծ հայի և ազգասերի ազատասիրական գործն ու գաղափարները շարունակեց, լըրացրեց ու նոր բարձրության հասցրեց ազգային շարժման մեկ այլ ռահվիրա՝ Մկրտիչ Փորթուգալյանը, որի գործունեության ամենաբեղուն ու փառավոր շրջանը Վանում անցկացրած տարիներն են: Ըստ որոշ տեղեկությունների, Վանից ոչ հեռու Այլուր գյուղում 1876 թ. նոյեմբերի 1-ին նա հիմնում է վարժարան, միաժամանակ ամեն կիրակի բանախոսում քաղաքի Հայկազյան վարժարանում:

Մեծ հայրենասերը մանրամասնորեն ուսումնասիրում է հայրենի եզերքը, տեղեկանք է կազմում Վան նահանգի սոցիալ-տնտեսական վիճակի մասին, նկարագրում գյուղերի տնտեսական, առողջապահական վիճակը: Թուրքական լրտեսների աչքից չվրիպեց Փորթուգալյանի բուռն ազգանվեր գործունեությունը և շուտով սկսվեցին հալածանքները:

1878 թ. Փորթուգալյանը Վանում բացում է իր հռչակավոր Վարժապետանոցը՝ ուսումնական չորս տարվա ծրագրով: Իսկ ապա, 1881-ին սեփական միջոցներով, որոշ չափով նաև Խրիմյան Հայրիկի զորակցությամբ, հիմնադրում է Կեդրոնական վարժարանը, որը գոյատևեց մինչև 1885 թվականը: Կեդրոնականը հայ դըպրության հինավուրց փարոսին նոր հավելում տվեց և Վանի ազատամիտ երիտասարդության համար եղավ հայրենասիրական ոգով թրծվելու դարբնոց: Կեդրոնականում ազգային ցավի ու արժանապատվության ոգով հոգևոր սնունդ ստացան, աճեցին ու դաստիարակվեցին բազմաթիվ ազատատենչ երիտասարդներ, ազգային գործիչների մի ողջ համաստեղություն, որոնցից շատերը դարձան Արմենական կուսակցության հիմնադիրները ու հետնորդները:

Փորթուգալյանի նախաձեռնությամբ շուտով Վանի հասարակական կյանքում մեծ նշանակություն են ձեռք բերում Կիրակնօրյա դպրոցը, հրապարակային ելույթներն ու բազմամարդ ժողովները, մարզական երթերը, զինավարժությունները, ուխտագնացությունները:

Վանի մտավոր-ազգային այս նորօրյա զարթոնքը մեծապես պայմանավորված էր Փորթուգալյանի և Խրիմյանի անձնուրաց ու խանդավառ գործունեությամբ:

Թուրքական կառավարության համար այլևս անընդունելի էր դարձել Փորթուգալյանի գործունեությունը Վանում և շուտով Բ. Դռան կարգադրությամբ Կեդրոնականը փակվեց: Այն ծանր կորուստ էր Վանի հայության համար, քանի որ ժամանակակիցների կողմից այն համարվում էր Վանի հայկական առաջին բարձրագույն վարժարանը:

Այսպիսով, ազգային մեծ գործիչներ Մկրտիչ Փորթուգալյանն ու Մկրտիչ Խրիմյանը դարձան կնքահայրը Վանի առաջին հեղափոխական-մարտական սերնդի, որն արդեն յուրացրել էր «Առանց զենքի չկա հայոց փրկություն» կարգախոսի էությունը: Երկու մեծ հայրենասերների ազգային ոգեղեն շնչի ներքո ձևավորված հենց այդ երիտասարդությանն էր վիճակված սկսելու կազմակերպված քաղաքական շարժումը՝ հիմք դնելով հայ առաջին քաղաքական կուսակցության կազմավորմանը: Հենց այդ երիտասարդներից շատերը, ինչպես արմենականների խիզախ առաջնորդ Մկրտիչ Ավետիսյանը, շուտով իրենց կյանքի գնով ևս մեկ անգամ ապացուցեցին «Մահ իմացյալ» պատգամի հարատևող կենսունակությունը, խիզախության և անձնազոհության խորհրդանիշ դառնալով հետագա սերունդների համար:

Պատմական անուրանալի ճշմարտություն է, որ հայ ազատագրական շարժման մեծ այրերի՝ Մկրտիչ Խրիմյանի ու Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական բուռն ու արդյունավետ գործունեությունը հինավուրց Վանում ստեղծեց ազգային զարթոնքի այն բարենպաստ մթնոլորտը, որը ծնունդ տվեց մի ամբողջ շարք հայրենանվեր գործիչների դաստիարակմանը: Նրանք դարձան 19-րդ դարի երկրորդ կեսի հայկական իրականության ազգային զարթոնքի հոգևոր հայրերը:

**Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
Պատմական գիտությունների թեկնածու

# Ղարաբաղը և Ռուսաստանը

Վերջերս Մոսկվայում ռուսերեն լույս է տեսել «Ղարաբաղը և Ռուսաստանը. պատմության էջեր» ուսումնասիրությունը: Գրքի հեղինակն է Պարույր Սեյրանյանը, ավելի ստույգ այն նրա թեկնածուական դիսերտացիան է, որ պաշտպանվել է Մոսկվայում, ռուսերեն, գրեթե 50 տարի առաջ: Պետք է արձանագրել, որ ուսումնասիրությունը ռուսերեն լեզվով առաջին խոշոր աշխատությունն էր՝ նվիրված Արցախի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, նրա ռուսական կողմնորոշմանը, որը հարյուրամյակների պատմություն ունի:

Հիմա, երբ Արցախի, նրա հերոսական ժողովրդի ու պատմության մասին արդեն գրվել և հրատարակվել են բազում գրքեր, հոդվածներ, ուսումնասիրություններ, սույն աշխատությունը այսօրվա աչքերով, շատ սովորական իրողություն է: Բայց եթե նկատի առնենք ուսումնասիրության լեզուն և մանավանդ թեկնածուական թեզի պաշտպանության ժամանակն ու տեղը, երբ Ղարաբաղյան թեման յոթ փակի տակ էր, երբ «ժողովուրդների բարեկամության» ջատագովները հանցանք էին համարում այդ թեմային անդրադառնալը, առավել է արժեքավորվում հեղինակի արածը:

Պարույր Աբրահամի Սեյրանյանը ծնվել է 1912 թվականին: 1918-ին տոհմիկ արցախցի նրանց ընտանիքը թուրքական վտանգից փախչելով, հաստատվում է Թիֆլիսում: 1934—39 թթ. նա սովորում է Մոսկվայի փիլիսոփայության, գրականության և պատմության ինստիտուտում: Ավարտելուց հետո աշխատել է Բաքվում, Ստեփանակերտում:

Այսօր «Գիտությունը» մի փոքրիկ հատված է հրապարակում «Ղարաբաղի միացումը Ռուսաստանին» գրքից:

⁂

1826 թվականին սկսվեց ռուս-պարսկական նոր պատերազմը:

Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցին, դիմելով ժողովրդին, գրեց. «Եկել է ժամանակը, երբ մենք սեփական աչքերով կըտեսնենք Արարատյան երկրների հայ ժողովրդի ազատագրությունը: Եկել է ժամանակը, երբ Մայր աթոռ սուրբ Էջմիածինը կվերագտնի իր նախկին անկախությունը: Ասպատամբեք, երիտասարդ հայեր, թոթափեք պարսից լուծը, հըրճվանք պատճառեք պլեհեր Արարատին, և այս անգամ ձեր արյունով հեղեք ձեր հայրենի հողը և ապա ապրեք ազատ կյանքով...

Ժամանա՜կն է, ժամանա՛կն է: Օ՜ն անդր: Կամ հիմա, կամ՝ երբեք»:

... Շուշին պաշարվեց: Հունիսի 26-ին ռուսական կայազորի հրամանատար, գնդապետ Ռեուտը նահանջելու հրաման ստացավ Երմոլովից: Սակայն Շուշիի ամրոցը աքցանի մեջ էր: Մընում էր կռվել, կռվել մինչև վերջին մարդը: Եվ ահա, 1300 ռուսական զինվոր և 1500 հայեր սկսեցին հերոսական դիմադրությունը բազմահազարանոց պարսկական զորքի դեմ: Գնդապետ Ռեուտի զեկուցագրերից մեկում կարդում ենք. «Պարտքս եմ համարում հաստատել, որ հայերի ծառայությունը արժանի է հատուկ խրախուսանքի: Նրանք բոլորը կռվում են գերազանց քաջությամբ, հերոսաբար հետ են մղում թշնամու գրոհները՝ մեծ վնաս հասցնելով հակառակորդին: Նրանք արհամարհում են մահը, զըրկանքները, մթերքի պակասը և լսել անգամ չեն ուզում բերդը հանձնելու մասին, թեև ուտելու ոչինչ չկա»:

Շուշիի հերոսական պաշտպանության ականատես, շուշեցի, հետագայում ռուս գեներալ Իվան Լազարևը տարիներ անց մանրամասն նկարագրեց բերդի այդ օրերի տարեգրությունը:

Արցախի պատմության հնագույն ժամանակներից մինչև մեր օրերն ընդգրկող ակնարկում հեղինակն օգտագործել է Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի արխիվների հավաքածու փաստաթղթեր և վավերագրեր: Պարույր Սեյրանյանը հանգամանորեն անդրադառնում է Ղարաբաղի պատմության կարևորագույն անցքերին և բազմաթիվ պատմական անունների՝ սկսած հայ ազգային-ազատագրական շարժման ռահվիրաներ Իսրայել Օրուց և Հովսեփ Էմինից մինչև Պետրոս Առաջին և Եկատերինա երկրորդ, իշխան Պոտյոմկին և Զուբով, կաթողիկոսներ Հովսեփ Արղության և Ներսես Աշտարակեցի, Պարսկաստանի շահեր Նադիր և Աղա-Մուհամմեդ, վրացական թագավորներ Հերակլ և Գեորգի 12-րդ, նշանավոր զորավարներ Սուվորով, Ցիցիանով, Երմոլով և Մադաթով:

Վերն ասված պատճառներով «Ղարաբաղի միացումը Ռուսաստանին» աշխատությունը այն տարիներին լույս տեսնել չէր կարող: Եվ ինչպես ասվեց, այն նոր է դրվել ընթերցողի սեղանին և հասցեագրված է պատմաբաններին, քաղաքագետներին, դիվանագետներին, լրագրողներին, պետական գործիչներին:

# Եղիշե առաքյալ

*(Սկիզբը՝ 1-ին էջում)*

մայր թագավորի օրոք «կրկին ու կատարյալ կերպով լուսավորվեց», այսինքն՝ հայոց մեծ դարձից հետո Աղվանքի բընակչությունը ևս, թագավորով հանդերձ, ընդունեցին քրիստոնեությունն մեկընդմիշտ: Ապա թագավորի մահից հետո Աղվանքում հայրապետ կարգվեց Գրիգոր Լուսավորիչի թոռը՝ Գրիգորիսը. «Հայաստանն ու Աղվանքն այս կարգով մընացին համակամ եղբայրությամբ ու անքակտելի դաշինքով մինչև օրս»:

Պարսկաստանի բռնությամբ առանձնացած Աղվանքի մարզպետությունը ձգտում էր գոնե հոգևոր կապով միասնական լինել Հայաստանի հետ՝ սա է Կաղանկատվացու երկի պաթոսը: Եվ որպեսզի հայոց դարձըն ընդհանուր լինի Մեծ Հայքով ու նրանից առանձնացված Աղվանքով, Վաչագան թագավորի օրոք Վաղարշապատից բերվեցին Ս. Գրիգորի, Հռիփսիմեի ու Գայանեի մասունքները ու ամփոփվեցին Աղվանքի հողում՝ Արցախ գավառի Դյուտական գյուղում, որտեղ և կառուցվում է մատուռ: Դյուտականը կամ Դյութքը այժմ ոչ մեծ լքյալ գյուղ է Մարտակերտի շրջանի հյուսիս-արևմտյան կողմերում, Կաղանկատույքի հարևանությամբ, ինչպես հեղինակն է նշում իր երկում:

Կաղանկատվացին քանիցս կրկնում է Եղիշի դերը. «Արևելյան այս երկրի լուսավորությունը սուրբ Եղիշայի միջոցով է սկիզբ առել»:

Առաջնության այս հարցն է, որ պատճառ է դարձել հայոց եկեղեցու կանոնիկ պատմության մեջ Եղիշե առաքյալի անունը չհիշատակելուն՝ պատմությունն Ագաթանգեղոսից սկսելով ու շարունակելով մինչև մեր օրերը: Բայց վիճարկության հարց չկա, «Աղվանքի պատմության» բուն հեղինակի, այսինքն Մովսես Կաղանկատվացու խոսքերով Եղիշեն Հայաստան մտավ Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալներից հետո, Աղվանքում կամ Արցախում կառուցվեց առաջին եկեղեցին, երբ Արտազում արդեն կար Թադեոսի առաջին սրբավայր մատուռը: Թադեոսն ու Բարդուղիմեոսը Քրիստոսի աշակերտ Թովմասի աշակերտն էին ըստ Ագաթանգեղոսի, իսկ Եղիշեն Թադեոսի աշակերտն էր, այսինքն առաքյալների երրորդ սերունդը, քարոզեց Հայաստանի ծայրամասում՝ Աղվանքում և իր հիշատակի կոթողն էլ ունեցավ զույգ երանելիներից հետո միայն:

Կաղանկատվացու շարունակողը կամ խմբագրողն անհիմն կերպով առաջնությունը վերագրում է Եղիշեին, որպես առաջին հայ լուսավորիչ և հայկական առաջին եկեղեցու հիմնադիր: Սա այդ դարում երկու եկեղեցիների սուր վիճաբանության արձագանքն է, Աղվանից կաթողիկոսության առանձնանալը առաջնության վկայագրի կարիքն ուներ:

Մովսես Կաղանկատվացու սկզբնաղբյուրն անհայտ է, գուցե անիրական ու մտացածին համարվի Եղիշե առաքյալի ողջ պատմությունը: Բայց եթե իրողություն է Հռիփսիմյանց կույսերի պատմությունը, նույնքան իրական պետք է համարվի նաև Եղիշե առաքյալի պատմությունը, քանի որ անհիմնության վրա չէր, որ հիմնըվեցին Ս. Գայանե և Ս. Հռիփսիմե տաճարները, նույնքան անհիմնության վրա չկառուցվեց Ս. Եղիշե առաքյալի տաճարը:

Սկզբնաղբյուրների առիթով գրքի վերջում ասվում է. «Հայրապետական անունների վերաբերյալ պատշաճ կլիներ ստույգ գրությամբ հիշատակել: Բայց քանի որ հնուց սկսած անցյալի նախակարապետ առաջնորդների գործերը, ժամանակագրությունն ու անունների ցուցակը հրկիզվել է անօրենների կողմից, իսկ կտակարանները, սպասքը և նրանց գտնվելու տեղերը մեզ անհայտ են, այնուամենայնիվ, լսելով չէ, որ ներկայացնում ենք, այլ փոքր ի շատե ցույց տալով բացահայտեցինք, որպեսզի նրանք, որոնք հետաքրքրվում են այս հարցով, իմանան»: Այնուհետև, որպես գրքի ռեփրեն, շարունակում է. «Արդ, մեր մեջ լուսավորության առաջին տարածողը եղավ առաքյալ Թադեոսի աշակերտ սուրբ Եղիշան, որը ձեռնադրվեց Երուսաղեմում սուրբ Հակոբոսի ձեռքով» և այլն:

Ուրեմն, Աղվանքի եկեղեցու հիմնադիրների մասին գրավոր աղբյուրները հրկիզվել են, բայց հեղինակը դրանց ծանոթ է եղել, «լսելով չէ, որ ներկայացնում է»:

Սակայն հավանական է, որ Կաղանկատվացու համար սկզբնաղբյուրներ էին նաև իր ծննդավայրում բանավոր վերապատմվող ավանդազրույցները, չէ՞ որ Կաղանկատույք գյուղը Եղիշե առաքյալի անվան հետ այնքան կապված Հոռեկա կամ Գիշու վանքի, Դյուտականի ու Վրվշտիկի հարևանությամբ էր, իր իսկ վկայությամբ: Անգամ մեր օրերում են պահպանվել Հոռեկա վանքում սրբի մասունքները պահ տալու ավանդազրույցի արձագանքները: Հոռեկը Թալիշ գյուղի համար ուխտավայր ու սրբավայր է, և պատմում են, որ վանքի արևմտյան պատի մեջ թաքցված գրքեր կան: Գրքերը պատի մեջ թաքցնելն աննախադեպ է, սակայն արևմտյան այդ պատը իսկապես ավելի զանգվածեղ է և ընդհանուր ճարտարապետությունից դուրս:

Այսպիսով, ըստ մեր հնագույն մատենագրության, առաջին եկեղեցու հիմքը դրվել է դեռևս առաքելական ժամանակներում, պատմական Հայաստանի Սրտագ գավառում, որն այժմ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում է: «Աղվանքի պատմությունից» էլ հետևում է, որ Եղիշե առաքյալի եկեղեցին՝ մեր օրերում պահպանված առաքելական ժամանակների նախահիմքեր ունեցող կառույցներից մեկն է բուն հայկական հողի վրա՝ Արցախում, կառուցված նույնանուն սրբավայրի վրա հետագա դարերում:

Այս ամենից կարծես հետևվում է, որ մեր Առաքելական եկեղեցին հայոց մեծ դարձի 1700-ամյա տոնակատարությունը պետք է սկսի ճիշտ նույն կարգով, ինչ կարգով քրիստոնեությունը մուտք է գործել Հայաստան, մեր առաջին դարձից և ճիշտ նույն վայրերից, որտեղ ցանվեցին լուսավորության առաջին սերմերը: Եվ քանի որ Ս. Թադեոսի վանքը մեզ անմատչելի է, ապա ծիսակարգը հավանաբար պետք է սկսել Հայոց արևելյան կողմանց Արցախ գավառի Եղիշե առաքյալի անունը կրող եկեղեցուց: Սրա կրոնաքարոզչական ու մանավանդ քաղաքական կարևորության մասին խոսելն ավելորդ է: Եվ դրան պետք է նախապատրաստվել այսօրվանից, բարեկարգելով Ս. Եղիշե առաքյալի վանքը:

# ԱՌԱՋԻՆ ՁՅՈՒՆԸ ԵԿԱՎ...

Թող ների մեզ հիդրոմետծառայության աշխատողները: Մենք գրում ենք ոչ թե սարքերի տվյալները համադրելով, այլ ելնելով մարդկանց հազարամյա փորձից:

— Երբ փոքր Մասիսի ձյունը լրիվ հալվում է, Արարատյան դաշտում հասնում է ձմերուկը:

— Երբ Արարատյան դաշտում հասնում է խաղողը, փոքր Մասիսին իջնում է առաջին ձյունը:

— Ամեն տարի, որքան էլ շոգ լինի ամառը, Աստվածածնի տոնից հետո գալիս է պաղ անձրև:

— Ամեն տարի Խաչվերաց տոնից հետո առաջին ձյունն է նստում Արարատի, փոքր Մասիսի, Արագածի և Աժդահակ լեռան վրա:

Այս տարի բացառություն եղավ. սեպտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Արարատյան դաշտում և լեռնահովիտներում հորդ անձրև տեղաց: Լեռնագագաթներն ու լանջերը պարուրվեցին թանձր մառախուղով ու պաղ քամին, որ հաջորդեց 30—35 աստիճան շոգին, հուշում էր, թե մառախուղից այն կողմ ինչ-որ բան է կատարվում: Երկու օր անց, երբ մառախուղը նահանջեց ու երկինքը պարզեց, կապույտի ֆոնին երևացին ճերմակ հագած լեռնագագաթները: Հայոց լեռնաշխարհում եկավ առաջին ձյունը: Որոշ տեղերում նկատվեցին ցրտահարումներ: Լեռներում, ուր դաշտըն ու հողը հալածվել էին կրկնվող կարկտահարումներից, գիշերային ցուրտը ըսպանեց երաշտից դալկացած շատ բույսեր: Սնացան դդումի, վարունգի, լոլիկի թփերը, բայց այգիներում ցըրտից քաղցրություն կուտակեցին տանձն ու խնձորը:

Այսպիսին է բնությունը. դիմանում է այն բույսը, որը տեղաբնակ է, իսկ եկվորները չեն դիմանում բնության արհավիրքներին:

Առաջին ձյունը եկավ 25 օր շուտ: Իսկ ձմե՞ռը...:

**ԱԿՆԱՍԵՍ**
Արագածոտն

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1997 թ. սեպտեմբերի 23—26-ը Հայաստանի ԳԱԱ օրգանական քիմիայի ինստիտուտում կկայանա հանրապետական գիտաժողով՝ նվիրված Հայաստանի Հանրապետությունում քիմիական գիտության 60 (ՀՀ ԳԱԱ քիմիայի ինստիտուտի ստեղծման 60), օրգանական քիմիայի ինստիտուտի հիմնադրման 40-ամյակին և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սարգիս Վարդանյանի հիշատակին (1917—1997):

**ՀՀ ԳԱԱ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

### ՄՐՑՈՒՅԹ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԳԾՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով գիտական ներուժը բժշկական ախտորոշման բնագավառում ներգրավելու, հիմնարար և կիրառական հետազոտությունների մերձեցմանը նպաստելու նպատակահարմարությունը, ինչպես նաև ներկա սոցիալ-տնտեսական պայմաններում հանրապետության գիտական ներուժի զարգացմանն աջակցելու անհրաժեշտությունը, «Դիագնոստիկա» բժշկական միավորման խորհուրդը որոշում է՝ հիմնել բժշկական ախտորոշման գծով ամենամյա գիտական գրանտների համակարգ: Սահմանվել է նաև, որ գրանտային ֆինանսավորման արդյունավետությունը և նրա կառուցվածքում աշխատավարձային մասնաբաժինը մեծացնելու նպատակով «Դիագնոստիկա» ԲՄ-ը գրանտները շահած մասնագետներին ու կոլեկտիվներին համապատասխան աշխատանքները կատարելու համար անվճար տրամադրում է իր տարածքը:

Գիտական գրանտները բաշխվում են բաց մըրցույթի միջոցով, որին կարող են մասնակցել հանրապետության բոլոր գիտնականներն ու նրանց խմբերը՝ այդ թվում արտասահմանյան մասնագետների ներգրավմամբ: Մրցույթին կարող են ներկայացվել բժշկական ախտորոշման կատարելագործմանն ուղղված գիտական աշխատանքներ (նոր ախտորոշիչ մեթոդների, ռեագենտների և տեխնոլոգիաների մշակում, ներդրում ու կատարելագործում, բժշկական ախտորոշման գծով կլինիկական և կենսաբժշկական հետազոտություններ, բժշկական վիճակագրություն և էպիդեմիոլոգիա, բժշկական ախտորոշմանն առընչվող այլ հետազոտություններ կլինիկական, կենսաքիմիական, կենսաֆիզիկական, ֆիզիոլոգիական և բնական ու տեխնիկական գիտությունների այլ ճյուղերում:

1998 թ. գիտական գրանտների մրցույթին աշխատանքների ներկայացման ժամկետը սահմանված է մինչև ս.թ. հոկտեմբերի 31-ը: Մրցույթին կարող են ներկայացվել մինչև 2,5 մլն դրամ ֆինանսավորում պահանջող գիտական հետազոտություններ: 5 մլն դրամ ընդհանուր գումարով գրանտների բաշխումը մինչև ս.թ. դեկտեմբերի 1-ը կատարելու է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, «Դիագնոստիկա»-ի և բժշկական ախտորոշման հայկական միության համատեղ հանձնաժողովը:

Մրցույթին մասնակցելու դիմումը և 10 էջի սահմաններում գիտական առաջարկը (ներառյալ ֆինանսա-տեխնոլոգիական հիմնավորումը) կարելի է մինչև ս.թ. հոկտեմբերի 31-ը ներկայացնել մրցութային հանձնաժողովի քարտուղարին (Երևան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6/1, «Դիագնոստիկա» ԲՄ, 309 սենյակ, հեռ.՝ 35-70-38): Առաջարկի շարադրման ձևը ազատ է: Անհրաժեշտ է նաև ներկայացնել վերջին 5 տարիների ընթացքում տվյալ թեմայի շուրջը տպագրված առնվազն 3 աշխատանքների ցանկը:

**«ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ» ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ**

### ՄԵՐ ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1. Բիկով: 2. Չեբիշև: 3. Վեքսլեր: 4. Մոնին: 6. Կապիցա: 7. Նիգամի: 10. Տիխոմիրով: 11. Բոգոմոլեց: 15. Պոպով: 16. Պավլով: 20. Արագո: 22. Պլանկ: 23. Սեչենով: 24. Նովիկով: 28. Պոտոն: 29. Չազով:

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 5. Զելինսկի: 12. Ջինս: 13. Վեբեր: 14. Բասով: 17. Կոմարով: 18. Վավիլով: 19. Ֆիլիպով: 21. Լաշինով: 25. Կյուրի: 26. Բեկոն: 27. Լայել: 30. Խարաձե: 31. Բոյլ: 32. Լոմոնոսով:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
Գլխավոր խմբագիր՝
**Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 դ. հեռախոս՝ 22-44-26:

«Պարբերական» հրատարակչության տպարան: Պատվեր՝ 69238, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 15.09.1997 թ. (1518—1542):

Թերթի հովանավորն է «ԿԱՆԱԶ» ՓԲԸ

**«ГИТУТЮН» —**
**(«Наука»)**
**Газета Национальной Академии наук РА**

ՀԱՆԴԻՊՈՒՄ Բյուզանդ Ֆընդըկյանի ՀԵՏ
«Գիտության» փարիզյան թղթակից,
ֆրանսահայ երգիչ, հասարակական գործիչ
ՀՈՒԼԻՍԻ 16-ԻՆ, ԺԱՄԸ 16-ԻՆ, ԱՕԿՍ-Ի ՍՐԱՀ